

2967

Ի. ՄՏԱԼԻՆ

ԱՌԱՋԻՆ ՀՆԳԱՄՅԱԿԻ
ՀԱՆՐԱԳՈՒՄԱՐՆԵՐԸ



ՀԱՅԿՈՒՍՏՐԱՏ • 1937 • ՅԵՐԵՎԱՆ

3K33

Գ-70

3K33

Ա-70

ւր

1 0 JUN 2005

Ի. ՍՏԱԼԻՆ

14 NOV 2003

ԱՌԱՋԻՆ ՀՆԳԱՄՅԱԿԻ
ՀԱՆՐԱԳՈՒՄԱՐՆԵՐԸ

Զեկուցում Համ Կ(բ)Կ ԿԿ-ի յեկ ԿՎՀ-ի միացյալ պլենումում
1933 թ. հունվարի 7-ին



1021
38

И. СТАЛИН
ИТОГИ ПЕРВОЙ
ПЯТИЛЕТКИ
Армартиздат, Ереван, 1937

Ընկերներ: Հնգամյա պլանի հրապարակ դալու ժամանակ մարդիկ հաղիվ թե յենթադրում եյին, վոր հնգամյակը կարող ե հսկայական միջազգային նշանակութիւն ունենալ: Ընդհակառակը, շատերը կարծում եյին, թե հնգամյակը խորհրդային Միութեան մասնավոր դործն ե, մի կարևոր և լուրջ դործ, բայց այնուամենայնիվ խորհրդային Միութեան մասնավոր, ազգային դործը:

Սակայն պատմութիւնը ցույց տվեց, վոր հնգամյակի միջազգային նշանակութիւնն անչափելի յե: Պատմութիւնը ցույց տվեց, վոր հնգամյակը վո՛չ թե խորհրդային Միութեան մասնավոր դործն ե, այլ ամբողջ միջազգային պրոլետարիատի դործը:

Հնգամյա պլանի հրապարակ դալուց դեռ շատ առաջ, այն ժամանակաշրջանում, յերբ մենք վերջացնում եյինք կռիւն ինտերվենտների դեմ և անցնում եյինք տնտեսական շինարարութեան ուղիների վրա,—դեռ այն ժամանակաշրջանում Լենինն ասում եր, վոր մեր տնտեսական շինարարութիւնը միջազգային խորը նշանակութիւն ունի, վոր խորհրդային իշխանութեան յուրաքանչյուր ատաշընթաց քայլը տնտեսական շինարարութեան ուղիով՝ խոր արձագանգ ե գտնում կապիտալիստական յերկիրներէ ամենաբաղձազան խավերում և մարդկանց յերկու բանակի յե բաժանում—պրոլետարական հեղափոխութեան կողմնակիցներէ բանակ և նրա հակառակորդներէ բանակ:

Լենինն այն ժամանակ ասում եր.

«Այժմ մենք միջազգային հեղափոխութեան վրա մեր գլխավոր ներդրութիւնն անում ենք մեր տնտեսական քաղաքականութեամբ: Ռուսաստանի խորհրդային հանրապետութեանն են նայում ամենքը, աշխարհի բոլոր յերկիրներէ բոլոր աշխատավորները, առանց վորեւե բացառութեան և ա-

«անց փորձե չափադանցութեան: Մենք հասել ենք սրան... Կոփմն այս աստղերն են փոխադրված համաշխարհային մաս- շտաբով: Յեթե մենք այս խնդիրը լուծենք—այն ժամանակ մենք միջադպրոց մասշտաբով հաստատապես ու վերջնակա- նորեն հաղթանակ չահած կլինենք: Այս պատճառով՝ տնտե- սական շինարարութեան հարցերը միանգամայն բացառիկ նշանակութիւն են ստանում մեզ համար: Այս ճակատում մենք պետք է հաղթութիւն տանենք դանդաղ, աստիճանա- կան,—արագ չի կարելի,—բայց անշեղ վերելքով ու առաջ- խաղացութեամբ» (տե՛ս հ. XXVI, էջ 410—411):

Այս ամէլ է այն ժամանակաշրջանում, յերբ մենք ալար- տում եյինք պատերազմն ինտերվենտների դեմ, յերբ կապիտալիզ- մի դեմ մղվող ռազմական կռիւց մենք անցնում եյինք պայքարի՝ տնտեսական ճակատում, անցնում եյինք տնտեսական շինարար- րութեան ժամանակաշրջանին:

Այն ժամանակվանից շատ տարիներ են անցել, և խորհրդա- յին իշխանութեան յուրաքանչյուր քայլը տնտեսական շինարարու- թեան բնագավառում, յուրաքանչյուր տարին, յուրաքանչյուր յետամսյակը փայլուն կերպով հաստատում եյին ընկ. Լենինի այս խոսքերի ճշտութիւնը:

Սակայն Լենինի խոսքերի ճշտութեան ամենափայլուն հաս- տատումը տվեց մեր շինարարութեան հնգամյա պլանը, այդ պլա- նի ծագումը, նրա զարգացումը, նրա իրագործումը: Իսկապես, թվում է, թե մեր յերկրի տնտեսական շինարարութեան ուղիով անվաճ վոչ մի քայլն այնպիսի արձագանգ չի գտել Յեվրոպայի, Ամերիկայի, Ասիայի կապիտալիստական յերկիրների ամենաբազ- մազան խավերում, ինչպես հնգամյա պլանի, նրա զարգացման, նրա իրականացման հարցը:

Առաջին պահին հնգամյա պլանը ծաղրի հանդիպեց բուր- ժուազիայի ու նրա մամուլի կողմից: «Փանտազիա», «դառան- ցանք», «ուտոպիա»,—այդպես մկրտեցին նրանք այն ժամանակ մեր հնգամյա պլանը: Հետո, յերբ սկսեց պարզվել, վոր հնգա- մյա պլանի կենսագործումն իրական արդիւնքներ է տա- լիս,—նրանք սկսեցին ահազանդ խփել, անդելով, թե հնգամյա պլանն սպառնում է կապիտալիստական յերկիրների գոյութեանը, թե նրա կենսագործումը կտանի դեպի յեվրոպական շուկաների յցումն ապրանքներով, դեպի դեմպինգի ու ժեզացումն ու գործա- զրկութեան խորացումը: Այնուհետեւ, յերբ խորհրդային իշխա- նութեան դեմ ռազմագործված այդ տրյուկն էլ սպառված ար-

դյունքները չտվեց,— բացվեց ամեն տեսակ ֆիրմաների, մամու- լի որդանների, դանազան տեսակ ընկերութիւնների և այլն դա- նազան ներկայացուցիչների ուղեւորութիւնների սերիան դեպի ՅՍՀՄ՝ այն նպատակով, վոր իրենց սեփական աչքերով մի լամ տեսնեն, թե, իսկապես ասած, ինչ է կատարվում ՅՍՀՄ-ում: Յես չեմ խոսում այստեղ բանվորական պատվիրակութիւնների մասին, վորոնք հնգամյա պլանի հրապարակ դալու սկզբից իսկ իրենց հիացմունքն եյին արտահայտում՝ խորհրդային իշխանու- թեան ձեռնարկումների ու հաջողութիւնների վերաբերյալ և ի- ռենց պատրաստակամութիւնն եյին ցուցաբերում՝ աջակցելու ՅՍՀՄ-ի բանվոր դասակարգին:

Հենց այդ ժամանակվանից էլ սկսվեց այսպես կոչված հա- սարակական կարծիքի, բուրժուական մամուլի, ամեն տեսակ բուրժուական ընկերութիւնների և այլոց պառակտումը: Վոմանք պնդում եյին, թե հնգամյա պլանը կատարյալ կրախի յե հանդի- պել և բոլշևիկները կործանման յեզրին են կանգնած: Մյուսներն, ընդհակառակը, հավատացնում եյին, վոր թեև բոլշևիկները վատ մարդիկ են, բայց և այնպես նրանց հնգամյա պլանից բան է դուրս գալիս, և նրանք, յերևի, կհասնեն իրենց նպատակին:

Թերես ավելորդ չի լինի, յեթե յես բերեմ բուրժուական մա- մուլի դանազան տեսակ որդանների կարծիքները:

Վերցնենք, որինակի համար, ամերիկայն «Նյու-Յորկ Տայմս» լրագիրը: 1932 թվի նոյեմբերի վերջին այդ թերթը գրում է.

«Հնգամյա արդիւնքների հաշիւը, վոր իրեն նպա- տակ է դրել մարտահրավեր ուղղել համամանութեան (про- порция) զգացումին ու իր նպատակին է ձգտում «անկախ ծախքերից», ինչպես հաճախ հպարտութեամբ պարծենում եր Մոսկվան, իրականութեան մեջ պլան չի հանդիսանում: Այդ— սպեկուլացիա յե»:

Դուրս է գալիս, վոր հնգամյակը մինչև անգամ պլան չե, այլ դատարկ սպեկուլացիա: Բայց ահա անդիւնական բուրժուական «Դեյլի Տեղերաֆ» լրագրի կարծիքը, վոր նա տվել է 1932 թվի նոյեմբերի վերջին:

«Յեթե պլանը քննարկենք իբրեւ փորձաքար «պլանավոր- ւող եկոնոմիկայի» համար, ապա մենք պետք է ասենք, վոր այն լիակատար կրախի յե յենթարկվել»:

«Նյու-Յորկ Տայմսի» կարծիքը 1932 թվի նոյեմբերին.

«Կոլեկտիվացումը խայտառակ կերպով տապալվեց: Նա Ռուսաստանը սովի յեզրին հասցրեց:

Լեհաստանի բուրժուական «Գաղետա Պոլսկա» լրագրի կարծիքը, վոր նա տվել է 1932 թվի ամառը.

«Երուրթյունը ցույց է տալիս, կարծես թե, վոր խորհուրդները կառավարությունը գյուղի կոլեկտիվացման իր քաղաքականության մեջ է ընկել»:

Անգլիական բուրժուական «Ֆինանշիել Տայմս» լրագրի կարծիքը, վոր նա տվել է 1932 թվի նոյեմբերին.

«Ստալինն ու նրա կուսակցությունն իրենց քաղաքականության հետևանքով կանգնած են հնդամյա պլանի սխառմի կրախի և այն բոլոր խնդիրներին տապալման առաջ, վորոնք այդ պլանով պետք է կենսագործվեյին»:

Իտալական «Պոլիտիկա» ժուռնալի կարծիքը.

«Անհեթեթություն կլիներ կարծել, թե 160 միլիոն մարդուց բաղկացած ժողովրդի չորս տարվա աշխատանքը, տնտեսական ու քաղաքական դերմարդկային լարման չորս տարին այնպիսի մի ուժեղ ռեժիմի կողմից, ինչպիսին բոլշևիկյան ռեժիմն է, վոչինչ չեն ստեղծել: Ընդհակառակը, նրանք շատ բան են ստեղծել: Յեվ այնուամենայնիվ կատաստրոֆն առկա չէ, դա բոլորի համար ակներև փաստ է: Այս բանում համոզվեցին բարեկամներն ու թշնամիները, բոլշևիկներն ու հակաբոլշևիկները, ոպողիցիոներներն ալից ու ձախից»:

Վերջապես, ամերիկյան բուրժուական «Կերրենս Զիատորի» ժուռնալի կարծիքը.

«Այսպիսով, գործերի ներկա դրության տեսությունը Ռուսաստանում՝ բերում է այն յեղրակացությունը, վոր հնդամյա ծրագիրը տապալվեց թե՛ հայտարարված նպատակների և թե՛ ե՛լ ավելի հիմնավորապես նրա հիմնական սոցիալական սկզբունքներին տեսակետից»:

Սրանք են բուրժուական մամուլի մի մասի կարծիքները:

Հաղիվ թե արժե քննադատել այս կարծիքների հեղինակներին: Յես կարծում եմ, վոր չարժե: Չարժե, վորովհետև այս «պնդաճակատ» մարդիկ պատկանում են միջնադարյան ժամանակաշրջանի հանածոների այն տեսակին, վորոնց համար փաստերը նշանակություն չունեն և վորոնք, ինչպես ել վոր կենսագործվելու լինի մեղանում հնդամյա պլանը,—միևնույնն է, իրենցն են պնդելու:

Անցնենք մամուլի այլ որդանների կարծիքներին, վորոնք զալիս են նույն այդ բուրժուական բանակից:

Ահա Թրանսիայի հայտնի բուրժուական «Թան» լրագրի կարծիքը, վոր նա տվել է 1932 թվի հունվարին.

«ԽՍՀՄ-ն չահեց առաջին տուրը, ինդուստրացման յենթարկվելով առանց ոտարերկրյա կապիտալի ոգնության»:

Նույն «Թանի» կարծիքը, տրված 1932 թ. ամառը.

«Կոմունիզմը հակապական տեմպերով ավարտում է վերակառուցումը, այն ժամանակ, յերբ կապիտալիստական հասարակակարգը թույլ է տալիս միմիայն դանդաղ քայլերով շարժվելու... Թրանսիայում, վորտեղ հողային տեփականությունն անսահմանորեն բաժանված է առանձին սեփականատերերի միջև, անհնար է մեքենայացնել գյուղատնտեսությունը, իսկ խորհուրդները, ինդուստրացման յենթարկվելով գյուղատնտեսությունը, կարողացան լուծել պարզեմը... Մեզ հետ տեղի ունեցող մրցության մեջ բոլշևիկները հաղթող դուրս յեկան»:

Անգլիական բուրժուական «Ռաունդ Տեյբլ» ժուռնալի կարծիքը.

«Հնդամյա պլանի նվաճումները դարձանալի յերևույթ են ներկայացնում: Խարկովի ու Ստալինգրադի տրակտորագործարանները, ԱՄՈ ավտոմոբիլային գործարանը Մոսկվայում, Ն.—Նովոգորոդի ավտոմոբիլային գործարանը, Դնեպրի հիդրոէլեկտրակայանը, Մագնիտոգորսկի ու Կուզնեցկի վիթխարի պողպատաձուլական գործարանները, մեքենաշինական ու քիմիական գործարանների ամբողջ ցանցն Ուրալում, վորը խորհրդային Ռուսի յե փոխարկվում,—այս բոլոր և մյուս արդյունաբերական նվաճումներն ամբողջ յերկրում՝ վկայում են, վոր ինչպիսի դժվարություններ ել լինեն, խորհրդային արդյունաբերությունն աճում ու ամրանում է, ինչպես մի լավ ջրվող բույս... Հնդամյա պլանն ապագա դարգացման հիմքերը դրեց և չափազանց ուժեղացրեց ԽՍՀՄ-ի հզորությունը»:

Անգլիական բուրժուական «Ֆինանշիել Տայմս» լրագրի կարծիքը.

«Մեքենաշինական արդյունաբերության մեջ ձեռք բերված հաջողությունները վոչ մի կասկածի յենթակա չեն: Այդ հաջողությունների գովաբանումը մամուլի մեջ և ճառերում ամենևին անհիմն չէ: Չպետք է մոռանալ, վոր Ռուսաստանն առաջ արտադրում եր միմիայն ամենապարզ մեքենաներ ու գործիքներ: Զիշտ է, այժմ ել մեքենա-

ների ու գործիքների ներմուծման բացարձակ թվերն ա-
վելանում են, բայց ներմուծված մեքենաների համամասնա-
կան բաժինը՝ հենց ԽՍՀՄ-ում արտադրված մեքենաների հա-
մեմատությամբ՝ անընդհատ նվազում է: ԽՍՀՄ-ն ներկա-
յումս արտադրում է այն ամբողջ սարքավորումը, վոր ան-
հրաժեշտ է իր մեծադարձական ու ելեկտրական արդյու-
նաբերության համար: Նա կարողացավ ստեղծել իր սեփական
ավտոմոբիլային արդյունաբերությունը: Նա ստեղծեց գոր-
ծիքների ու ինստրումենտների արտադրությունը, վորն ընդ-
գրկում է ամբողջ դամբան՝ մեծ ճշգրտություն պահանջող
ամենամանր գործիքներից սկսած մինչև ընդհուպ ամենից
ալիքի ծանր մամլիչները: Իսկ ինչ վերաբերում է դյուզա-
սնտեսական մեքենաներին, ապա ԽՍՀՄ-ն այլևս կախում
չունի արտասահմանյան ներմուծումից: Դրա հետ միասին
խորհրդային կառավարությունը միջոցներ է ձեռք առնում,
վորպեսզի ածխի ու յերկաթի արտադրանքի հապաղումը խո-
չընդոտ հՀանդիսանա հնգամյակը չորս տարում իրականաց-
նելուն: Կասկածի յենթակա չէ, վոր նոր կառուցված վիթ-
խարի գործարաններն ապահովում են ծանր արդյունաբերու-
թյան արտադրանքի նշանակալի աճումը»:

Ավստրիական բուրժուական «Նոյե Ֆրայե Պրեսսե» լրագրի
կարծիքը, վոր նա տվել է 1932 թվի սկզբին.

«Բուլչեկզմը կարելի չէ նզովել, բայց պետք է ճանաչել
այն: Հնգամյակը—այդ մի նոր հսկա յե, վորին անհրաժեշտ
է ուշադրության առնել և, համենայն դեպս, տնտեսական
հաշվարկի մեջ դրել»:

Անգլիական կապիտալիստ Գիրբսոն Ջարվիի, «Յունայտեղ
գոմինիոն» բանկի նախագահի, կարծիքը, տրված 1932 թվի հոկ-
տեմբերին.

«Յես ուզում եմ պարզաբանել, վոր յես կոմունիստ չեմ
և բուլչեկ չեմ, յես վորոչակի կապիտալիստ ու ինդիվիդուա-
լիստ եմ... Ռուսաստանն առաջ է շարժվում այն ժամա-
նակ, յերբ մեր գործարաններից շատ-շատերը չեն բանում և
մեր ժողովրդից մոտ 3 միլիոն հուսահատություն մեջ աշխա-
տանք են վորոնում: Հնգամյակը ծաղրում էյին ու նրա տա-
պալումը նախադուշակում: Բայց դուք կարող եք անկասկա-
ծելի համարել, վոր հնգամյա պլանի պայմաններում ալեկի
բան է արված, քան ուրվագծվել եր ... Իմ այցելած բոլոր
արդյունաբերական քաղաքներում նոր չըմաններ են առաջ

դալիս, վորոնք կառուցված են վորոչ պլանով, ծառերով ու
պուրակներով զարդարված լայն փողոցներով, ամենից ալե-
կի ժամանակակից տիպի տներով, դպրոցներով, հիվանդա-
նոցներով, բանվորական ահումբներով և անխուսափելի ման-
կամուրներով ու մանկատներով, վորտեղ հոգ են տանում
աշխատող մայրերի յերեխաների մասին ... Մի՛ վործեք թե-
րադնահատել ռուսական պլանները և սխալ մի՛ դործեք, հու-
սալով, թե խորհրդային կառավարությունը կարող է տա-
պալել... Այստիպ Ռուսաստանը հոգի ու իդեալ ունեցող
մի յերկիր է: Ռուսաստանն ապշեցուցիչ ալտիլիթյան յեր-
կիր է: Յես հավատում եմ, վոր Ռուսաստանի ճգնաժամներն
առողջ են... Թերևս ամենակարևորն այն է, վոր ամբողջ յե-
րիտասարդությունն ու բանվորները Ռուսաստանում մի բան
ունեն, վորը, դժբախտաբար, այստր պակասում է կապիտա-
լիստական յերկիրներում, այն է՝ հույս»:

Ամերիկյան բուրժուական «Նեյչլեն» ժուռնալի կարծիքը,
տրված 1932 թվի նոյեմբերին.

«Հնգամյա պլանի չորս տարիները հիրավի նշանակալից
նվաճումներ բերին իրենց հետ: Խորհրդային Միությունը
պատերազմական ժամանակի ինտենսիվությամբ եր աշխա-
տում նոր կյանքի հիմքերը կառուցելու ստեղծագործական
խնդրի վրա: Յերկրի կերպարանքը փոխվում է բառացիորեն
աննախադեպ չափ... Այդ ճիշտ է Մոսկվայի վերա-
բերմամբ՝ նրա հարյուրավոր նոր ասֆալտած փողոցներով
ու սուրբակներով, նոր շենքերով, նոր արվարձաններով ու
նոր գործարանների շղթայով նրա ծայրամասերում: Այդ
ճիշտ է նաև ալեկի վորք քաղաքների վերաբերմամբ: Նոր
քաղաքներ են առաջ յեկել տափաստաններում ու անապատե-
րում, վոր՛չ թե ինչ-վոր միքանի քաղաքներ, այլ առնվազն 50
քաղաք, 50-ից մինչև 250 հազար բնակչությամբ: Նրանք
բոլորն առաջ են յեկել վերջին չորս տարիներում, նրանցից
յուրաքանչյուրը հանդիսանում է մի նոր ձեռնարկության կամ
մի շարք ձեռնարկությունների կենտրոնը, ձեռնարկություն-
ներ, վորոնք կառուցվել են բնական ռեսուրսները մշակելու
համար: Հարյուրավոր նոր չըմանային ելեկտրոկայաններ և
Դնեսպրոստրոյի նման ամբողջ մի շարք հսկաներ աստիճանա-
բար կենսագործում են Լենինի այն ֆորմուլան, թե «Սոցիա-
լիզմը խորհրդային իշխանությունն է պլյուս ելեկտրիֆիկա-
ցիան»... Խորհրդային Միությունը կազմակերպել է անթիվ-

անհամար այնպիսի առարկաների մասսայական արտադրութիւն, վոր առաջ Ռուսաստանը յերբեք չէր արտադրում, այն է՝ տրակտորներ, կոմբայնների, բարձրորակ պողպատների, սինթետիկ կաուչուկի, գնդառանցքակալներ (шарико-подшипник), հզոր դիզելներ, 50 հազար կիլովատանոց տուրբինների, հեռախոսային սարքավորման, լեռնարդյունաբերութեան համար ելեկտրական մեքենաների արտադրութիւնը, սավառակների, ավտոմոբիլների, հեծանիվների և նոր մեքենաների միջանի հարյուր տիպերի արտադրութիւնը... Պատմութեան մեջ առաջին անգամ Ռուսաստանն արդյունահանում է ալյումին, մագնեզիտ, ապատիտներ, յոդ, պոտաշ և շատ ուրիշ արժեքավոր արդյունքներ։ Խոքերդային հարքավայրերի ուղեցույց կետերն այլևս յեկեղեցիների խաչերն ու գմբեքները չեն, այլ հացահատիկային ելեկատրոններն ու սիլուսի աշտարակները։ Կոլանտեսութիւնները կառուցում են տներ, դռներ, խողանոցներ։ Ելեկտրականութիւնը թափանցում է գյուղը, ռազիոն ու թերթերը նվաճել են այն։ Բանվորները սովորում են աշխատել նորագոյն մեքենաների վրա։ Գյուղացի տղաներն այնպիսի դյուղատնտեսական մեքենաներ են արտադրում ու սպասարկում նրանց, վորոնք ավելի մեծ են ու ավելի բարդ, քան այն, ինչ վոր յերբեք տեսել է Սմերիկան։ Ռուսաստանն սկսում է «մեքենայներով մտածել»։ Ռուսաստանը փայտի դարից արագորեն անցնում է յերկաթի, պողպատի, բետոնի ու շարժիչների դարին։

Անգլիական «ձախ» ռեֆորմիստական «Ֆորվարդ» ժուռնալի կարծիքը, տրված 1932 թվի սեպտեմբերին.

«Աչքի յե դարնում այն վիթխարի աշխատանքը, վորը տեղի յե ունենում ԽՍՀՄ-ում։ Նոր գործարաններ, նոր գըլգոցներ, նոր կիւններ, նոր ակումբներ, նոր վիթխարի տներ՝ ամենուրեք նոր շէնքեր։ Նրանցից շատերն արդեն ավարտված են, մյուսները դեռ չըջապատված են փայտածածկերով։ Դժվար է անգլիացի ընթերցողին պատմել, թե ինչ է արված վերջին յերկու տարում և ինչ է արվում այնուհետև։ Այդ ամենը պետք է տեսնել՝ հալատալու համար։ Մեր սեփական նվաճումները, վոր մենք իրականացրել ենք պատերազմի ժամանակ, — դատարկ բաներ են միայն այն բանի հետ համեմատած, ինչ վոր կատարվում է ԽՍՀՄ-ում։ Ամերիկացիներն ընդունում են, վոր նույնիսկ ամենարուսն ստեղծագործական տենդային գործունեւթյան չըջանում արեւմտյան

նահանգներում, այնտեղ վոչ մի բան չի յեղել, վոր նման լիներ ԽՍՀՄ-ի այժմյան տենդային ստեղծագործական գործունեւթյանը։ Վերջին յերկու տարում ԽՍՀՄ-ում այնքան շատ փոփոխութիւններ են տեղի ունեցել, վոր մարդ հրաժարվում է այլևս պատկերացնել, թե ինչ կլինի այդ յերկրում տասը տարի ևս անցնելուց հետո... Դուրս նետեցեք ձեր գլխից անգլիական թերթերի պատմած ֆանտաստիկ սարսափելի պատմութիւնները, թերթեր, վորոնք այնպես համառորեն ու այնպես անհեթեթ կերպով ստում են ԽՍՀՄ-ի մասին։ Դուրս դցեցեք ձեր գլխից նաև այն ամբողջ թերատ ճշմարտութիւնն ու տպավորութիւնները, վորոնք հիմնված են չհասկանալու վրա, վորոնք տարածել են դիւետանտութիւն անող ինտելիգենտները, մարդիկ, վորոնք ԽՍՀՄ-ի վրա նայում են հովանավորող հայացքով՝ միջին դասակարգի ակնոցներով, բայց ամենափոքրիկ պատկերացում անգամ չունեն, թե ինչ է կատարվում այնտեղ... ԽՍՀՄ-ն նոր հասարակութիւն է կառուցում առողջ հիմքերի վրա։ Այդ նպատակն իրականացնելու համար պետք է ոխիկ յենթարկվել, պետք է խանդավառութեամբ աշխատել, այնպիսի յեռանդով, վորպիսին աշխարհը մինչև այժմ չի տեսել, պետք է պայքարել ամենավիթխարի դժվարութիւնների դեմ, վորոնք անխոսափելի յեն, յերբ ձգտում ես սոցիալիզմ կառուցել միայն աշխարհից մեկուսացած լայնածավալ յերկրում։ Բայց յերկու տարվա ընթացքում կրկին անգամ այցելելով այդ յերկիրը՝ յես այն տպավորութիւնն ստացա, վոր նա ընթանում է հաստատուն առաջադիմութեան ուղիով, պլանավորում, ստեղծագործում ու կառուցում է, և այդ ամենն այնպիսի մասշտաբով, վոր պայծառ մարտահրաւիր է հանդիսանում թշնամի կապիտալիստական աշխարհի հասցեյին»։

Այսպիսի տարածայնութիւն ու պառակտում կա բուրժուական շրջանների բանակում, վորոնցից վոմանք կողմնակից են ԽՍՀՄ-ի վոնչաջմանն իր իբրեւ թե տապալված հնդամյա պլանի հետ միասին, իսկ մյուսներն, ըստ յերեւութին, կողմնակից են առեւտրական համագործակցութեան ԽՍՀՄ-ի հետ, ակներևաբար հույս ունենալով, թե հնդամյա պլանի հաջողութիւններից կարելի կլինի վորոչ ոգուտ քաղել իրենց համար։

Առանձին տեղ է բռնում այն հարցը, թե կապիտալիստական յերկիրների բանվոր դասակարգն ինչ վերաբերմունք ունի դեպի հնդամյա կի հարցը, դեպի ԽՍՀՄ-ի սոցիալիստական շինարարու-

թյան հաջողութիւններէ հարցը: Այստեղ կարելի չէր սահմանա-
փակել՝ բերելով ամեն տարի ԽՍՀՄ յեկող բազմաթիւ բանվո-
րական պատվիրակութիւններէ մեկէ, թեկուզ, որինալ, բել-
գիական բանվորական պատվիրակութեան կարծիքը: Այդ կարծի-
քը տիպիկ է բանվորական առանց բացառութեան բոլոր պատվի-
րակութիւններէ համար, միևնույն է՝ խոսքը վերաբերում է ար-
դյոք անդլիական թե ֆրանսական պատվիրակութեանը, գերմա-
նական թե ամերիկայան, թե այլ յերկիրներէ պատվիրակութիւն-
ներին: Ահա այն.

«Մենք հիացած ենք այն վիթխարի շինարարութեամբ,
վոր մենք դիտում եյինք մեր ճանապարհորդութեան ժամա-
նակ: Մոսկվայում, ինչպես և Մակեյեվկայում, Գորոլովկա-
յում, Խարկովում ու Լենինգրադում, մենք կարողացանք ար-
ձանագրել, թե ինչպիսի խանդավառութեամբ են աշխատում
աշխատել: Բոլոր մեքենաները նորագույն կառուցվածք ունեն:
Գործարաններում տիրում է մաքրութիւն, ողն ու լույսը
չափ է: Մենք տեսանք, թե ինչպէս է ԽՍՀՄ-ում բժշկական
ու սանիտարական ոգնութիւն ցույց տրվում բանվորներին:
Բանվորական բնակարանները կառուցված են գործարաններին
մոտիկ: Բանվորական քաղաքամասերում կազմակերպված են
գպրոցներ ու մսուրներ. յերեխաները շրջապատված են ա-
մենախնամոտ հոգատարութեամբ: Մենք կարողացանք տես-
նել տարբերութիւնը հին ու նորակառուց զործարաններէ
միջև, հին ու նոր բնակարաններէ միջև: Այն ամենը, ինչ վոր
մենք տեսանք, պարզ պատկերացում տվեց մեզ այն աշխատա-
վորների վիթխարի ուժի մասին, վորոնք նոր հասարակու-
թիւն են կառուցում կոմունիստական կուսակցութեան ղեկա-
վարութեամբ: Մենք ԽՍՀՄ-ում մեծ կուլտուրական վերելք
տեսանք այն ժամանակ, յերբ մյուս յերկիրներում անկում է
տիրում բոլոր բնագավառներում, տիրում է դժբաղդկու-
թիւն: Մենք կարողացանք տեսնել, թե ինչպիսի սոսկալի
դժվարութիւններէ յեն հանդիպում խորհրդային աշխատա-
վորներն իրենց ճանապարհին: Ե՛լ ամէլի մեծ չափով մենք
հասկանում ենք այն հպարտութիւնը, վորով նրանք մեզ
ցույց են տալիս իրենց հաղթութիւնները: Մենք համոզված
ենք, վոր նրանք կհաղթահարեն բոլոր խոչընդոտները»:

Ահա ձեզ հնգամյակի միջազգային նշանակութիւնը: Բալա-
կան եր, վոր մենք շինարարական աշխատանք կատարեցինք ինչ-
վոր յերկու-յերեք տարվա ընթացքում, բավական եր ցույց տալ

հնգամյակի առաջին հաջողութիւնները, վորպեսզի ամբողջ աշ-
խարհը յերկու բանակի բաժանվեր—այնպիսի մարդկանց բանակի,
վորոնք անդադրում հաջում են մեզ վրա, և այնպիսի մարդկանց
բանակի, վորոնք ապշած են հնգամյակի հաջողութիւններից. ել
չենք խոսում այն մասին, վոր դոյութիւն ունի և ուժեղանում է
մեր սեփական բանակն ամբողջ աշխարհում,—կապիտալիստական
յերկիրների բանվոր դասակարգի բանակը, վորն ուրախանում է
ԽՍՀՄ-ի բանվոր դասակարգի հաջողութիւններով և պատրաստ
է ոգնութիւն ցույց տալու նրան՝ ի սարսափ ամբողջ աշխարհի
բուրժուազիայի:

Ի՞նչ է նշանակում այդ:

Այդ նշանակում է, վոր հնգամյակի միջազգային նշանակու-
թիւնը, նրա հաջողութիւններն ու նվաճումներն միջազգային
նշանակութիւնը—կասկածի յենթակա չեն:

Այդ նշանակում է, վոր կապիտալիստական յերկիրները հզի
յեն պրոլետարական հեղափոխութեամբ, և հենց այն պատճառով,
վոր նրանք հզի յեն պրոլետարական հեղափոխութեամբ, բուր-
ժուազիան կկամենար հնգամյակի անհաջողութիւններէ մեջ նոր
փաստարկ քաղել հեղափոխութեան դեմ, մինչդեռ պրոլետարիա-
տը, ընդհակառակը, աշխատում է հնգամյակի հաջողութիւն-
ներից նոր փաստարկ քաղել և իրոք քաղում է հոգուտ հեղափո-
խութեան, ընդդեմ ամբողջ աշխարհի բուրժուազիայի:

Հնգամյակի հաջողութիւնները մոքիլիգացիայի յեն յենթա-
կում բոլոր յերկիրների բանվոր դասակարգի հեղափոխական ու-
ժերը կապիտալիզմի դեմ,—այս է անվիճելի փաստը:

Չի կարող տարակուս լինել, վոր հնգամյակի միջազգային
հեղափոխական նշանակութիւնն իրոք անչափելի յեն:

Ե՛լ ամէլի մեծ ուշադրութեամբ պետք է վերաբերվենք մենք
հնգամյակի հարցին, հնգամյակի բովանդակութեան, հնգամյակի
հիմնական խնդիրների հարցին:

Ե՛լ ամէլի մեծ խնամքով պետք է մենք վերլուծենք հնգա-
մյակի հանրազումարները, հնգամյա պլանի կատարման ու կեն-
սադարձման հանրազումարները:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԼԱՆԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԽՆԴԻՐԸ ՅԵՎ ՆՐԱ ԿԵՆՍԱԳՈՐԾՄԱՆ ՈՒՂԻՆ

Անցնենք հնդամյա պլանի հարցին ըստ ելուծյան:

Ի՞նչ է հնդամյա պլանը:

Վո՞րն եր հնդամյա պլանի հիմնական խնդիրն է:

Հնդամյակի հիմնական խնդիրն եր՝ հետամնաց և հաճախ միջնադարյան տեխնիկա ունեցող մեր յերկիրը փոխադրել նոր, ժամանակակից տեխնիկայի ունեւերի վրա:

Հնդամյակի հիմնական խնդիրն եր՝ ԽՍՀՄ-ն աղբարային ու աւղոր, կապիտալիստական յերկիրներէ քմահաճույքներէ կախված յերկրից փոխարկել միանդամայն ինքնուրույն և համաշխարհային կապիտալիզմի քմահաճույքներէ անկախ՝ ինդուստրիալ ու հզոր յերկրի:

Հնդամյակի հիմնական խնդիրն եր՝ փոխարկելով ԽՍՀՄ-ն ինդուստրիալ յերկրի, — մինչև վերջը դուրս մղել կապիտալիստական տարրերին, ընդարձակել տնտեսության սոցիալիստական ձևերի ճակատը և տնտեսական բաղա ստեղծել՝ ԽՍՀՄ-ում դասակարգերը վոչնչացնելու համար, սոցիալիստական հասարակություն կառուցելու համար:

Հնդամյակի հիմնական խնդիրն եր՝ ստեղծել մեր յերկրում այնպիսի ինդուստրիա, վորն ընդունակ լիներ սոցիալիզմի հիմքի վրա վերադինելու և վերակադմելու վոչ միայն արդյունաբերությունն իբրև ամբողջություն վերցրած, այլև տրանսպորտը, այլև գյուղատնտեսությունը:

Հնդամյակի հիմնական խնդիրն եր՝ փոխադրել մանր և ցլրուցան գյուղատնտեսությունը խոշոր կոլեկտիվ տնտեսության ունեւերի վրա, դրանով իսկ ապահովել սոցիալիզմի տնտեսական

բաղան դյուղում և աղբարիսով վերացնել ԽՍՀՄ-ում կապիտալիզմը վերականգնելու հնարավորությունը:

Վերջապես, հնդամյա պլանի խնդիրն եր՝ ստեղծել յերկրում տեխնիկական ու տնտեսական բոլոր անհրաժեշտ նախադրյալները՝ առավելագոյն չափով բարձրացնելու համար յերկրի պաշտպանունակությունը, վոր հնարավորություն է տալիս վճռական դիմադրություն կադմակերպելու դրսից յեկող ռադմական ինտերվենցիայի բոլոր ու ամեն տեսակ փորձերին, դրսից ռադմական հարձակում գործելու բոլոր ու ամեն տեսակ փորձերին:

Ի՞նչն եր թելագրում հնդամյակի այդ հիմնական խնդիրը, ինչո՞վ եր հիմնավորվում այն:

Խորհրդային Միության տեխնիկական-տնտեսական հետամնացությունը լիկվիդացիայի յենթարկելու անհրաժեշտությամբ, հետամնացություն, վոր նրան աննախանձելի գոյության է դատապարտում, յերկրում այնպիսի նախադրյալներ ստեղծելու անհրաժեշտությամբ, վորոնք նրան հնարավորություն տալին վոչ միայն հասնելու տեխնիկա-տնտեսական տեսակետից առաջավոր կապիտալիստական յերկիրներին, այլև ժամանակին նաև անցնելու նրանցից:

Այն նկատառումով, վոր խորհրդային իշխանությունը չի կարող յերկար դիմանալ հետամնաց արդյունաբերության բաղայի վրա, վոր միմիայն ժամանակակից խոշոր արդյունաբերությունը, վորը վոչ միայն չի դիմում կապիտալիստական յերկիրներին արդյունաբերությանը, այլև կարող է ժամանակին գերադանցել նրանցից—խորհրդային իշխանության համար կարող է իրական ու վստահելի պատվանդան ծառայել:

Այն նկատառումով, վոր խորհրդային իշխանությունը չի կարող յերկար ժամանակ հենվել յերկու հակադիր հիմքերի վրա, — խոշոր սոցիալիստական արդյունաբերության վրա, վոր վոչնչացնում է կապիտալիստական տարրերին, և գյուղացիական մանր միանձնյա տնտեսության վրա, վոր կապիտալիստական տարրեր է ծնում:

Այն նկատառումով, վոր քանի դեռ գյուղատնտեսության համար խոշոր արտադրության բաղա չի ստեղծված, քանի դեռ գյուղացիական մանր տնտեսությունները չեն միավորվել խոշոր կոլեկտիվ տնտեսությունների մեջ, — ԽՍՀՄ-ում կապիտալիզմի վերականգնման վտանգն ամենաիրական վտանգն է հնարավոր բոլոր վտանգներից:

Լենինն ասում եր.



—յիյառայլ «Հեղափոխութիւնն» արեց՝ աշխարհը վոր Ռուսաստանն իր
բաղաձայն կարգերով միջանկիւմ մտնում հասարակական
նորոգելիքներին: Դժ մղվումս միայն աշխարհը, քանակի
ցղմայլ Բայց աշխարհը թիչուեմա Պատերազմն ամուրդը եւ նա հարցը
—ապաշխարմ եւ դաժան արութիւնով կամ հերթմանիւ, կամ հասնել
—յի նորոգումս յերկիրներին ուղանցներ նրանցից նաև տնտեսա-
—դասակէս մործանկեր, կամ ամբողջ թափով առաջ սլանալ: Այս-
մայնպէս եւ դրեք հարցը պատմութիւնը» (տե՛ս Հ. XXI, էջ 191):

Լենինն անտեղեկ էր միայն միայն իր զոյգ
ցղման հրահանգներ մենք ապրում ենք մանր գյուղացիական յերկ-
րում, կապիտալիզմի համար Ռուսաստանում ավելի հաս-
—ամաստեղե տնտեսական բաղաձայն, քան կոմունիզմի համար:
Դնա Այս անհրաժեշտ եւ հիշել: Յուրաքանչյուր վոր, ով ուշա-
—ար դրութեամբ դիտել եւ գյուղի կյանքը՝ համեմատելով այն քա-
—մա զաքի կյանքի հետ, դիտել, վոր մենք կապիտալիզմի արմատ-
ցիկները դուրս չենք քաշել և ներքին թշնամու ֆունդամենտը,
ցոյց տալով չենք խարխուլել: Վերջինս դիմանում եւ հենվելով մանր
—միջնակարգութեան վրա, և այն խարխուլելու համար մի միջոց կա՝
յերկրի տնտեսութիւնը, այդ թվում նաև հողագործութիւն-
ը, փոխադրել տեխնիկական նոր բաղաձայն վրա, ժամանակա-
—արկից խոշոր արտադրութեան տեխնիկական բաղաձայն վրա...
—յի միմիայն այն ժամանակ, յերբ յերկիրն ելեկտրիֆիկացիայի
—դի յենթարկված կլինի, յերբ արդյունաբերութիւնը, գյուղա-
—այն տնտեսութիւնն ու տրանսպորտը հիմնված կլինեն ժամանա-
—յի միակից խոշոր արդյունաբերութեան տեխնիկական բաղաձայն
վրա, միմիայն այն ժամանակ մենք վերջնականապէս կհաղ-
—ար թենք» (տե՛ս Հ. XXVI, էջ 46—47):

—, ահնայն այս գլուխները կազմեցին կուսակցութեան այն նկա-
ղաւորներին հիմքը, վորոնք հանգեցրին հնդամյա պլանի մշակ-
վանը, վորոնք հանգեցրին հնդամյա պլանի հիմնական խնդրի
վորոշմանը:

Այսպէս եւ հնդամյա պլանի հիմնական խնդրի բանը:
—, Բայց այդպիսի վիթխարի պլանի իրականացումը չի կարելի
սկսել ցերեպան, վորտեղից վոր պատահի: Վորպէսդի այդ պլանն
իրականացվի, պետք եւ ամենից առաջ դառնել պլանի հիմնական
թղակը, վորովհետեւ միմիայն հիմնական ողակը դառնելով ու նը-
բան կառնելով կարելի յեր դուրս քաշել պլանի մյուս բոլոր ո-
ղակները:

Վորն եր հնդամյա պլանի հիմնական ողակը:

Հնդամյա պլանի հիմնական ողակը ծանր արդյունաբերու-
թիւնն եր իր միջոցով—մեքենաշինութեամբ: Վորովհետեւ մի-
միայն ծանր արդյունաբերութիւնն եւ ընդունակ վերականգնելու
եւ վորքի կանգնեցնելու թե՛ արդյունաբերութիւնն ամբողջու-
թեամբ վերցրած, թե՛ տրանսպորտը, թե՛ գյուղատնտեսութիւն-
ը: Հենց դրանից ել պետք եր սկսել հնդամյա իրականացումը:
Հեռաբար, ծանր արդյունաբերութեան վերականգնումը պետք
եր հիմք դարձնել՝ հնդամյա պլանն իրականացնելու համար:

Մենք ունենք Լենինի ցուցումները նաև այդ հարցի մասին:
«Ռուսաստանի համար փրկութիւնն եւ վո՛չ միայն գյու-
ղացիական տնտեսութեան լավ բերքը,—այս դեռ քիչ եւ,—եւ
վո՛չ միայն լավ վիճակը թեթեւ արդյունաբերութեան, վորն
ուսումնաւորականներ եւ մատակարարում գյուղացիութեա-
նը,—այս ել դեռ քիչ եւ,—մեզ անհրաժեշտ եւ նաև ծանր ին-
դուստրիա... Առանց ծանր արդյունաբերութիւնը փրկելու,
առանց այն վերականգնելու, մենք վո՛չ մի արդյունաբերու-
թիւն կառուցել չենք կարող, իսկ առանց սրան՝ մենք ընդ-
հանրապէս կկործանվենք իբրև ինքնուրույն յերկիր... Մանր
ինդուստրիան պետական սուբսիդիաների կարիք ունի: Յեթե
մենք չգտնենք դրանք, ապա մենք, վորպէս քաղաքակիրթ
պետութիւն—եւ չեմ ասում, վորպէս սոցիալիստական պե-
տութիւն,—կորած ենք» (տե՛ս Հ. XXVII, էջ 349):

Բայց ծանր ինդուստրիայի վերականգնումն ու զարգացումը,
մանավանդ այնպիսի հետամնաց ու աղքատ յերկրում, ինչպիսին
եր մեր յերկիրը հնդամյակի սկզբին, ամենադժվար դործն եւ,
վորովհետեւ, ինչպէս հայտնի յեւ, ծանր ինդուստրիան պահան-
ջում եւ ֆինանսական հսկայական ծախսեր և վորովհետեւ տեխնի-
կական ուժերի վորոշ միմիայն առկայութիւն, առանց վորոնց,
ընդհանրապէս ասած, անհնար եւ վերականգնել ծանր ինդուստ-
րիան: Գիտե՞ր արդե՞ր այդ մասին կուսակցութիւնը և հաշիվ
տալի՞ս եր արդե՞ր իրեն այդ մասին: Այո՛, գիտեր: Յեւ վո՛չ
միայն գիտեր, այլ և հայտարարում եր այդ մասին ի լուր ամեն-
քի: Կուսակցութիւնը գիտեր, թե ինչ ճանապարհով եր կա-
ռուցվել ծանր ինդուստրիան Անգլիայում, Գերմանիայում, Ամե-
րիկայում: Նա գիտեր, վոր այդ յերկիրներում ծանր ինդուստ-
րիան կառուցվել եր կա՛մ խոշոր փոխառութիւնների ոգնութեամբ,
կա՛մ ալ յերկիրներ կողոպտելու միջոցով, կա՛մ միաժամանակ
թե՛ մեկ և թե՛ մյուս ուղիով: Կուսակցութիւնը գիտեր, վոր
այդ ուղիները փակ են մեր յերկրի համար: Ուրեմն ինչի՞ վրա

յեր հույս դրել նա: Նա հույս եր դրել մեր յերկրի սեփական ու-
ժերի վրա: Նա հույս եր դրել այն բանի վրա, վոր մենք, ունե-
նալով խորհրդային իշխանութիւնն և հենվելով հողի, արդյունա-
բերութեան, տրանսպորտի, բանկերի, առևտրի աղբյւրանցման
վրա, կարող ենք խնայողութեան ամենախիստ ռեժիմ կիրառել,
վորպէսզի ծանր ինդուստրիան վերականգնելու ու զարգացնելու
համար անհրաժեշտ բաժանանաչափ միջոցներ կուտակենք: Կու-
սակցութիւնն ուղղակի ասում եր, վոր այդ գործը լուրջ զոհա-
բերութիւններ կպահանջի, վոր մենք պետք է բացահայտենք ու
գիտակցաբար համաձայնենք այդ զոհաբերութիւններին, յեթե
ուզում ենք նպատակին հասնել: Կուսակցութիւնը հույս ունեւ
այդ գործը գլուխ բերել մեր յերկրի ներքին ուժերով, առանց
դրսի ստրկացուցիչ վարկերի ու փոխառութիւնների:

Ահա թե ինչ եր ասում է ենինն այդ առթիւ:

«Մենք պետք է աշխատենք կառուցել մի պետութիւն,
վորի մեջ բանվորները պահպանելին իրենց ղեկավարութիւն-
նը գյուղացիների նկատմամբ, գյուղացիների վստահութիւնն
իրենց վերաբերմամբ և մեծագույն խնայողութիւն անելով:
Իրենց հասարակական հարաբերութիւնները արտաքին
վորեւ շուրջութեան բոլոր հետքերը:

Մենք պետք է առավելագույն խնայողութիւն մտցնենք
մեր պետապարտի մեջ: Մենք պետք է նրա միջից վտարենք
շուրջութիւնների բոլոր հետքերը, վորպիսի շուրջութիւն-
ներ այնքան շատ են մնացել նրա մեջ ցարական Ռուսաստա-
նից, նրա բյուրոկրատական-կապիտալիստական ասպարաից:

Արդոք այդ գյուղացիական սահմանափակվածութեան
թաղավորութիւն չի՞ լինի:

Վո՛չ: Յետեւ մենք պահպանենք բանվոր դասակարգի ղե-
կավարութիւնը գյուղացիութեան վերաբերմամբ, ապա մենք
հնարավորութիւն կստանանք տնտեսութեան մեծագույն ու
մեծագույն խնայողութեան պնով մեր պետութեան մեջ հաս-
նելու այնպիսի դրութեան, վորպէսզի ամեն մի փոքրագույն
խնայողութիւն պահենք մեր խոշոր մեքենային ինդուստրիա-
յի զարգացման համար, երկտրիֆիկացիայի, հիդրոէլեկտրի-
կային զարգացման համար, Վոլխովստրոյի կառուցումն ավարտելու
համար և այլն:

Այս և միմիայն այս կշիռի մեր հույսը: Միայն այն ժա-
մանակ մենք ի վիճակի կլինենք, պատկերավոր կերպով ա-
սած, մի ձիւղ նստել մյուս ձին, այն է՝ գյուղացիական,

գեղջիկական, աղքատացած ձիւղ, քայքայված գյուղացիական
յերկրը նկատի ունեցող տնտեսումների ձիւղ նստել այն
ձին, վորը վորոնում է և չի կարող չվորոնել իրեն համար
պրոլետարիատը, — խոշոր մեքենային ինդուստրիայի, երեկ-
տրիֆիկացիայի, Վոլխովստրոյի և այլն ձին» (տե՛ս հ. XXV, էջ 417):

Աղքատացած գեղջիկական ձիւղ նստել խոշոր մեքենային ին-
դուստրիայի ձին, — ահա թե ինչ նպատակ եր հետապնդում կու-
սակցութիւնը՝ մշակելով հնգամյա պլանը և ձգտելով հասնել
նրա իրականացմանը:

Սահմանել խնայողութեան ամենախիստ ռեժիմ և կուտակել
մեր յերկրի ինդուստրացումը ֆինանսավորելու համար անհրա-
ժեշտ միջոցներ, — ահա թե ինչ ճանապարհ պետք եր բռնել՝ ծանր
ինդուստրիայի վերականգնման ու հնգամյա պլանի իրականացման
հասնելու համար:

Խիզա՞նք խնդիր ե, դժվարի՞ն ուղի: Բայց մեր կուսակցու-
թիւնը հենց նրա համար է կոչվում լենինյան կուսակցութիւն,
վոր նա իրավունք չունի վախենալու դժվարութիւններից:

Դեռ ավելին: Կուսակցութեան համոզվածութիւնը հնգամյա-
կի իրադրութեան վերաբերմամբ և վստահութիւնը ղեպի
բանվոր դասակարգի ուժերն այնքան ուժեղ էին, վոր կուսակ-
ցութիւնը հնարավոր գտավ իր առաջ խնդիր դնել՝ իրականաց-
նելու այդ դժվարին գործը վո՛չ թե հինգ տարում, ինչպէս այդ
պահանջում եր հնգամյա պլանը, այլ չորս տարում, իսկպէս՝
չորս տարի և յերեք ամսում, յետեւ ավելացնենք հատուկ յեռա-
մակը:

Այդ հիման վրա ել ծնւեց «Հնգամյակը չորս տարում» հռչա-
կավոր լոզունգը:

Յեւ ի՞նչ:

Փաստերը հետադառնում ցույց տվին, վոր կուսակցութիւնն
իրավացի յեր:

Փաստերը ցույց տվին, վոր առանց այդ խիզախութեան և ա-
ռանց բանվոր դասակարգի ուժերի նկատմամբ վստահ լինելուն,
կուսակցութիւնը չեր կարող ձեռք բերել այն հաղթութիւնը,
վորով այժմ իրավամբ հպարտանում ենք մենք:

ԶՈՐՍ ՏԱՐՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՆԱԳԱՄՅԱԿԻ ՆԱՆՐԱՋ ԳՈՒՄԱՐՆԵՐՆ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ

Այժմ անցնենք հնգամյա պլանի իրականացման հանրագումարների հարցին:

Վարձեր են չորս տարում կատարված հնգամյակի հանրագումարներն արդյունաբերության բնագավառում:

Հաղթություն ձեռք բերին արդյուք մենք այդ բնագավառում:

Այո՛, ձեռք բերինք: Յեւ վո՛չ միայն ձեռք բերինք, այլև ավելի շատ բան արինք, քան սպասում էինք մենք ինքներս, քան կարող էին սպասել մեր կուսակցության ամենատար դուռները: Այժմ այդ չեն ժխտում նույնիսկ թշնամիները: Առավել ևս այդ չեն կարող ժխտել մեր բարեկամները:

Մենք չունեցինք սև մետաղագործություն, յերկրի ինդուստրիայի հիմքը: Այժմ մենք ունենք այն:

Մենք չունեցինք տրակտորային արդյունաբերություն: Այժմ մենք ունենք այն:

Մենք չունեցինք ավտոմոբիլային արդյունաբերություն: Այժմ մենք ունենք այն:

Մենք չունեցինք հաստոցաշինություն: Այժմ մենք ունենք այն:

Մենք չունեցինք լուրջ և ժամանակակից քիմիական արդյունաբերություն: Այժմ մենք ունենք այն:

Մենք չունեցինք իսկական և լուրջ արդյունաբերություն՝ ժամանակակից գյուղատնտեսական մեքենաների արտադրությամբ համար: Այժմ մենք ունենք այն:

Մենք չունեցինք ավիացիոն արդյունաբերություն: Այժմ մենք ունենք այն:

Երեկտրական եներգիտ արտադրելու իմաստով մենք կանգնած էինք ամենալերջին տեղում: Այժմ մենք առաջ ենք անցել առաջին տեղերից մեկը:

Նավթալոծողաների ու անհրաժեշտ արտադրության իմաստով մենք կանգնած էինք վերջին տեղում: Այժմ մենք առաջ ենք անցել առաջին տեղերից մեկը:

Մենք ունեցինք միմիայն մեկ միակ ածխամետաղագործական բազա—Ուկրաինայում, մի բազա, վոր դժվարություններ էինք կատարում: Մենք հաջանք այն բանին, վոր վո՛չ միայն բարձրացրինք այդ բազան, այլև ստեղծեցինք մի նոր ածխամետաղագործական բազա—Արևելքում, վոր մեր յերկրի հարստությունն է կազմում:

Մենք ունեցինք տեքստիլ արդյունաբերություն միմիայն մեկ միակ բազա—մեր յերկրի Հյուսիսում: Մենք հասունք այն բանին, վոր ամենամոտ ժամանակում կունենանք տեքստիլ արդյունաբերության յերկու նոր բազա — Միջին Ասիայում ու Արևմտյան Սիբիրում:

Յեւ մենք վո՛չ միայն ստեղծեցինք արդյունաբերություն այդ նոր վիթխարի ճյուղերը, այլև մենք ստեղծեցինք դրանք աշխարհի մասշտաբով ու այնպիսի չափերով, վորոնց առաջ նսեմանում են յեվրոպական ինդուստրիայի մաշտաբներն ու չափերը:

Իսկ այդ ամենի հետևանքն այն յեղավ, վոր կապիտալիզմական տարրերը վերջնականապես ու անվերադարձ կերպով դուրս են մղված արդյունաբերությունից, իսկ սոցիալիստական արդյունաբերությունը դարձել է ինդուստրիայի միակ ձեռք յՄՍ՝ Միությունում:

Իսկ այդ ամենի հետևանքն այն յեղավ, վոր մեր յերկիրն ադրարային յերկրից դարձավ ինդուստրիալ յերկիր, վորովհետև արդյունաբերական արտադրանքի տեսակարար կշիռը գյուղատնտեսականի նկատմամբ հնգամյակի սկզբի (1928 թ.) 48%-ից հնգամյակի չորրորդ տարվա (1932 թ.) վերջերքին բարձրացավ հասավ 70%-ի:

Իսկ այդ ամենի հետևանքն այն յեղավ, վոր հնգամյակի չորրորդ տարվա վերջերքին մեզ հաջողվեց կատարել ընդհանուր արդյունաբերական արտադրության հինգ տարվա ծրագիրն 93,7 տոկոսով, բարձրացնելով արդյունաբերական արտադրանքի ծավալն ավելի քան յերեք անգամ՝ համեմատած մինչպատերազմյան

մակարդակի հետ և ավելի քան յերկու անգամ—համեմատած 1928 թվի մակարդակի հետ: Ինչ վերաբերում է ծանր արդյունաբերության արտադրանքի ծրագրին, ապա մենք հնդամյա պլանը կատարեցինք 108%-ով: Ծիրչո է, մենք այստեղ հնդամյակի ընդհանուր ծրագիրը թերակատարեցինք 6%-ով: Բայց այդ բացատրվում է նրանով, վոր նկատի ունենալով հարեան յերկիրների հրաժարվելը մեզ հետ չհարձակվելու պակտեր կնքելուց և Հեռավոր Արևելքում տեղի ունեցած բարդությունները, մենք ստիպված յեղանք, յերկրի պաշտպանությունն ուժեղացնելու նպատակով, մի շարք զործարաններ շտապ կերպով փոխադրել պաշտպանություն ժամանակակից զործիքների արտադրությունը: Իսկ այդ փոխադրումը, վորի համար անհրաժեշտ էր անցնել նախապատրաստական փուլը չըջան, այն հետևանքն ունեցավ, վոր այդ զործարանները չորս ամիս դադարեցրին իրենց արտադրությունը, իսկ այդ չէր կարող չանդրադառնալ 1932 թվականի ընթացքում արտադրություն լու վրա: Այդ ոպերացիայի հետևանքն այն յեղավ, վոր մենք ամբողջովին ու լիովին վերացրինք յերկրի պաշտպանունակություն զործում զոյություն ունեցող բացերը: Բայց այդ չէր կարող բացասաբար չանդրադառնալ արտադրության ծրագիրն ըստ հնդամյա պլանի կատարելու վրա: Վոչ մի տարակույս չի կարող լինել, վոր առանց այդ միջանկյալ հանդամանքի մենք վո'չ միայն կկատարեյինք, այլև անշուշտ կգերակատարեյինք հնդամյա պլանի թվական մասը:

Վերջապես, այդ ամենի հետևանքն այն յեղավ, վոր Խորհրդային Միությունը թույլ և պաշտպանություն համար անպատրաստ յերկրից վերածվեց հզոր յերկրի՝ պաշտպանունակության իմաստով, մի յերկրի, վորը պատրաստ է ամեն տեսակ պատահականությունների հանդեպ, մի յերկրի, վորն ընդունակ է մասսայական մասշտաբով արտադրելու պաշտպանության բոլոր ժամանակակից զործիքները և մատակարարելու դրանք իր բանակին՝ դրսից կատարվող հարձակման դեպքում:

Ընդհանուր առմամբ սրանք են չորս տարում կատարված հնդամյակի հանրագումարներն արդյունաբերության բնագավառում:

Այժմ ինքներդ դատեցեք. այդ ամենից հետո ի՞նչ արժե բուրժուական մամուլի չաղակրատությունը հնդամյակի «տապալման» մասին արդյունաբերության բնագավառում:

Իսկ ի՞նչպես է կապիտալիստական յերկիրների բանը, վորոնք

ներկայումս դաժան ճգնաժամ են ապրում՝ նրանց արդյունաբերական արտադրանքի ամման իմաստով:

Ահա բոլորին հայտնի պաշտոնական տվյալները:

Այն ժամանակ, յերբ ԽՍՀՄ-ի արդյունաբերական արտադրանքի ծավալը, համեմատած մինչպատերազմյան մակարդակի հետ, 1932 թվի վերջերքին անել է 334%-ով, ՀԱՄՆ-ի արդյունաբերական արտադրանքի ծավալը նույն ժամանակաշրջանում իջել է մինչպատերազմյան մակարդակի 84%-ին, Անգլիայինը—75 տոկոսին, Գերմանիայինը—62%-ին:

Այն ժամանակ, յերբ ԽՍՀՄ-ի արդյունաբերական արտադրանքի ծավալը 1932 թվի վերջերքին, համեմատած 1928 թ. մակարդակի հետ, անել-հասել է 219%-ի, ՀԱՄՆ-ի արդյունաբերական արտադրանքի ծավալը նույն ժամանակաշրջանում իջել է 56%-ի, Անգլիայինը—80%-ի, Գերմանիայինը—55%-ի, Լեհաստանինը—54%-ի:

Ինչի՞ մասին են խոսում այս տվյալները, յեթե վոչ այն մասին, վոր արդյունաբերության կապիտալիստական սիստեմը քըն-նություն չըռնեց խորհրդային սիստեմի հետ ունեցած իր մրցություն մեջ. վոր արդյունաբերության խորհրդային սիստեմը բոլոր առավելություններն ունի կապիտալիստական սիստեմի հանդեպ:

Մեզ ասում են, թե այդ ամենը լավ է, կառուցվել են շատ նոր զործարաններ, դրված է ինդուստրացման հիմքը: Բայց շատ ավելի լավ կլինեք հրաժարվել ինդուստրացման քաղաքականությունից, արտադրության միջոցների արտադրությունն ընդարձակելու քաղաքականությունից, կամ դոնե հետաձգել այդ զործը հետին պլանը՝ ավելի շատ չիթ, վոտնաման, հագուստ և լայն սպտման այլ առարկաներ արտադրելու համար: Լայն ըստ պատման առարկաներ ավելի քիչ են արտադրվել, քան հարկավոր է, իսկ դա վորոչ դժվարություններ է ստեղծում:

Բայց այդ դեպքում պետք է դիտենալ և պետք է հաշիվ տալ իրեն, թե ուր կտաներ մեզ ինդուստրացման խնդիրները հետին պլանը մղելու նմանորինակ քաղաքականությունը: Իհարկե, մենք կարող եյինք այդ ժամանակաշրջանում մեր ծանր արդյունաբերության սարքավորման վրա ծախսված մեկուկես միլիարդ ուրբուլ վալյուտայի կեսը հատկացնել բամբակի, կաշվի, բրդի, կաուչուկի և այլնի ներմուծմանը: Այն ժամանակ մենք ավելի շատ չիթ, վոտնաման, հագուստ կունենայինք: Բայց այն ժամանակ մենք չեյինք ունենալ վո'չ տրակտորային, վո'չ ավտոմոբիլային

արդյունաբերութիւն, չեյինք ունենա քիչ թե շատ լուրջ սե մե-
տաղազործութիւն, չեյինք ունենա մետաղ՝ մեքենաներ արտա-
գրելու համար,— և մենք անդէն կգտնուէինք նոր տեխնիկայով
գինված կապիտալիստական շրջապատման հանդեպ: Այն ժամա-
նակ մենք մեզ գրկած կլինէինք գյուղատնտեսութեանը արահտոր-
ներ ու գյուղատնտեսական մեքենաներ մատակարարելու հնարա-
վորութիւնից,— հետևապէս մենք առանց հացի կմնայինք:
Մենք մեզ գրկած կլինէինք յերկրում կապիտալիստական
տարրերի դեմ հաղթութիւն տանելու հնարավորութիւնից,—
հետևապէս մենք անչափ կբարձրացնէինք կապիտալիզմի
վերականգնման շանսերը: Այն ժամանակ մենք, չեյինք ու-
նենա պաշտպանութեան այն բոլոր ժամանակակից միջոցները,
առանց վորոնց հնարավոր չէ յերկրի պետական անկախութիւնը,
առանց վորոնց յերկիրն արտաքին թշնամիներէ ռազմական ու պե-
րացիաների որբեկտի յե վերածվում: Այն ժամանակ մեր դուր-
թիւնն ավելի կամ պակաս չափով նման կլինէր ներկա Չինաս-
տանի դրութեանը, վորը չունի իր ծանր արդյունաբերութիւնը,
չունի իր ռազմական արդյունաբերութիւնը, և վորին այժմ կըտ-
ցահարում են բոլորը, ովքեր չեն ալարում:

Մի խոսքով՝ այդպիսի դեպքում մենք կունենայինք ռազմա-
կան ինտերվենցիա, վո՛չ թե չհարձակվելու պակտեր, այլ պա-
տերազմ, վտանգավոր ու մահացու պատերազմ, արյունահեղ ու
անհալածար պատերազմ, վորովհետեւ այդ պատերազմում մենք
համարյա թե անդէն կլինէինք այն թշնամիներէ հանդեպ, վո-
րոնք իրենց տրամադրութեան տակ ունեն հարձակման ժամանա-
կակից բոլոր միջոցները:

Ահա թե դործն ինչ կերպարանք է ստանում, ընկերներ:

Պարզ է, վոր իրեն հարգող պետական իշխանութիւնը, իրեն
հարգող կուսակցութիւնը չեն կարող այդպիսի կորստաբեր տե-
սակետի վրա կանգնել:

Յեւ վհենց այն պատճառով, վոր կուսակցութիւնը մերժեց
այդպիսի հակահեղափոխական դիրքավորումը,— հենց այդ պատ-
ճառով նա վճռական հաղթութիւն տարավ հեղափոխ պլանն ար-
դյունաբերութեան բնագալառում կատարելու գործում:

Իրականացնելով հեղափոխութիւն և կազմակերպելով հաղթու-
թիւնն արդյունաբերական շինարարութեան բնագալառում՝ կու-
սակցութիւնն արդյունաբերութեան զարգացման ամենից ավելի
արագացված տեմպերի քաղաքականութիւն էր կիրառում: Կու-

սակցութիւնն, ասեա, քչելիս լինէր յերկիրը, արագացնելով նրա
առաջընթաց վազքը:

Ճի՞շտ էր վարվում արդյոք կուսակցութիւնը, կիրառելով
ամենից ավելի արագացված տեմպերի քաղաքականութիւնը:

Այո՛, անպայման ճիշտ:

Ձի կարելի չտապ կերպով առաջ չմղել այն յերկիրը, վորը
հետ է մնացել 100 տարով, և վորին նրա հետամնացութեան պատ-
ճառով մահացու վտանգ է սպառնում: Միմիայն այդպիսով կա-
րելի չէր հնարավորութիւն տալ յերկիրն՝ արագորեն վերադի-
վելու նոր տեխնիկայի բազայի վրա և վերջապէս դուրս գալու
լայն ճանապարհ:

Այնուհետեւ, մենք չեյինք կարող գիտենալ, թե իմպերիալիստ-
ները վոր ուր կհարձակվեն իՍՂՄ-ի վրա և կընդհատեն մեր չի-
նարաբերութիւնը. իսկ վոր նրանք ամեն բոլոր կարող եյին հար-
ձակվել, ոգտվելով մեր յերկրի տեխնիկական-տնտեսական թու-
լութիւնից,— այդ մասին տարակույս չեն կարող լինել: Այդ
պատճառով կուսակցութիւնը հարկադրված էր առաջ քշել յեր-
կիրը, վորպեսզի ժամանակը ձեռքից չթողնի, մինչև վերջն ոգ-
տագործի զաղարը և կարողանա իՍՂՄ-ում ստեղծել ինդուս-
տրացման հիմքերը, վորոնք նրա հզորութեան բազան են: Կու-
սակցութիւնը հնարավորութիւն չունէր սպասելու ու մանկելու-
լու և նա պարտավոր էր ամենից ավելի արագացված տեմպերի
քաղաքականութիւն կիրառել:

Վերջապէս, կուսակցութիւնը պետք է ըստ կարելույն կարճ
ժամկետում վերջ տար յերկրի թուլութեանը պաշտպանութեան
ստպարեղում: Մոմենտի պայմանները, սպառազինութիւնների ա-
ճումը կապիտալիստական յերկիրներում, զինաթափման գաղա-
փարի տարալումը, միջազգային բուրժուազիայի ատելութիւնը
դեպի իՍՂՄ-ն,— այդ ամենը դրդում էր կուսակցութեանը, վոր-
պեսզի նա արագացնի յերկրի պաշտպանութեան կուսութեան՝ նրա անկա-
խութեան հիմքի՝ ուժեղացման գործը:

Բայց կուսակցութիւնն արդյոք ռեալ հնարավորութիւն ու-
նե՞ր իրականացնելու ամենից ավելի արագացված տեմպերի քա-
ղաքականութիւնը: Այո՛, ունեն: Նա այդ հնարավորութիւնն
ունէր վո՛չ միայն այն պատճառով, վոր ժամանակին կարողացաւ
թափ տալ յերկիրն արագ առաջխաղացման վողով, այլ ամենից
առաջ այն պատճառով, վոր նա նոր լայն շինարարութեան գոր-
ծում կտրող էր հենվել հին կամ նորոգված այն գործարաններէ
ու ֆաբրիկաների վրա, վորոնք արդեն յուրացված եյին բանվոր-

ների ու ինժեներներ— տեխնիկական անձնակազմի կողմից և վորոնք գրաւ չնորհիվ հնարավորութիւնն եյին տալիս իրականացնելու զարգացման ամենից ավելի արագացված տեմպերը:

Ահա թե ինչ հիմքի վրա աճեցին մեզ մոտ առաջին հնգամյակի ժամանակաշրջանում նոր շինարարութեան արագ վերելքը, ծավալուն շինարարութեան պայթիսը, նոր շինարարութեաններէ հերոսներն ու հարվածայինները, զարգացման բոլոր տեմպերի պրակտիկան:

Կարելի՞ չէ արդո՞ք ասել, վոր յերկրորդ հնգամյակում ևս հարկավոր կլինի ամենից ավելի արագացված տեմպերի ճիշտ նույն քաղաքականութիւնը կիրառել:

Վո՛չ, չի կարելի այդ ժառել:

Նախ՝ հնգամյակի հաջող կենսագործման շնորհիվ մենք հիմնականում արդեն իրականացրինք նրա գլխավոր խնդիրը— ժամանակակից նոր տեխնիկայի բազա ստեղծեցինք արդյունաբերութեան, արանսպորտի, դյուռլատնտեսութեան համար: Արժե՞ արդո՞ք դրանից հետո առաջ քշել ու շտապեցնել յերկիրը: Պարզ է, վոր այժմ դրա անհրաժեշտութիւնը չկա:

Յերկրորդ, հնգամյակի հաջող կատարման հետեւանքով մեզ արդեն հաջողվեց պատշաճ բարձրութեան հասցնել յերկրի պաշտպանութիւնը: Արժե՞ արդո՞ք դրանից հետո առաջ քշել ու շտապեցնել յերկիրը: Պարզ է, վոր այժմ դրա անհրաժեշտութիւնը չկա:

Վերջապէս, հնգամյակի հաջող կատարման հետեւանքով մեզ հաջողվեց կառուցել տասնյակ ու հարյուրավոր նոր մեծ գործարաններ ու կոմբինատներ, վորոնք նոր բարդ տեխնիկա ունեն: Այդ նշանակում է, վոր յերկրորդ հնգամյակում արդյունաբերական արտադրանքի ընդհանուր ծավալի մեջ հիմնական դեր են խաղալու արդեն վո՛չ թէ հին գործարանները, վորոնց տեխնիկան արդեն յուրացված է, ինչպէս բոլոր տեղի ունեւ առաջին հնգամյակի ժամանակաշրջանում, այլ նոր գործարանները, վորոնց տեխնիկան դեռ չի յուրացված և վորը պետք է յուրացնել: Բայց նոր ձեռնարկութիւններն ու նոր տեխնիկայի յուրացումը շատ ավելի մեծ դժվարութիւններ է ներկայացնում, քան հին կամ նորոգված այն գործարանների ու ֆաբրիկաների ոգտագործումը, վորոնց տեխնիկան արդեն յուրացված է: Այդ յուրացումն ավելի շատ ժամանակ է պահանջում՝ բանվորների ու ինժեներներ-տեխնիկական անձնակազմի վորակավորումը բարձրացնելու և նոր տեխնիկայի լրիւ ոգտագործման նոր հմտութիւններ ձեռք բերելու:

Համար: Այս ամենից հետո մի՞թէ պարզ չէ, վոր յերկրորդ հնգամյակում կամենայինք, յերկրորդ հնգամյակում, մասնաւոր յերկրորդ հնգամյակի առաջին յերկու-յերեք տարում, չեյինք կարողանա իրականացնել զարգացման ամենից ավելի արագացված տեմպերի քաղաքականութիւնը:

Ահա թե ինչու յես կարծում եմ, վոր յերկրորդ հնգամյակի համար մեզ պետք կլինի արդյունաբերական արտադրանքի աճման ավելի պակաս արագացված տեմպեր վերցնել: Առաջին հնգամյակի ժամանակաշրջանում արդյունաբերական արտադրանքի տարեկան աճը միջին հաշվով կազմում էր 22%: Յես կարծում եմ, վոր յերկրորդ հնգամյակի համար պետք կլինի ընդունել արդյունաբերական արտադրանքի տարեկան աճի 13—14% միջին հաշվով: Կապիտալիստական յերկիրների համար արդյունաբերական արտադրանքի աճի այդպիսի տեմպն անհասանելի իդեալ է: Յեւ վո՛չ միայն արդյունաբերական արտադրանքի աճի այդպիսի տեմպը, — նույնիսկ տարեկան միջին աճի 5%-ը նրանց համար այժմ անհասանելի իդեալ է: Բայց դրա համար եւ նրանք կապիտալիստական յերկիրներ են: Այլ բան է խորհրդային յերկիրը՝ տնտեսութեան խորհրդային սիստեմով: Տնտեսութեան մեր սիստեմի պայմաններում մենք լիակատար հնարավորութիւն ունենք և պետք է իրականացնենք արտադրանքի տարեկան աճի 13—14%-ը վորպէս միմիում:

Առաջին հնգամյակի ժամանակաշրջանում մենք կարողացանք կազմակերպել նոր շինարարութեան խանդավառութիւնը, պայթիսը և վճռողական հաջողութիւններ ձեռք բերինք: Այդ շատ լավ է: Բայց այժմ այդ քիչ է: Այժմ այդ գործը մենք պետք է լրացնենք նոր գործարանների ու նոր տեխնիկայի յուրացման խանդավառութեամբ, պայթիսով, աշխատանքի արտադրողականութեան լուրջ բարձրացումով, ինքնարժեքի լուրջ կրճատումով:

Այդ է այժմ գլխավորը:

Վորովհետեւ միմիայն այդ բաղադրի վրա կարող ենք մենք հասնել այն բանին, վոր, ասենք, յերկրորդ հնգամյակի յերկրորդ կեսում նոր հզոր թափ առնենք թե՛ շինարարութեան բնագաւառում և թե՛ արդյունաբերական արտադրանքի աճի բնագաւառում:

Վերջապէս, միջանի խոսք արտադրանքի տարեկան աճի բուն տեմպերի ու տոկոսների մասին: Մեր արդյունաբերողները քիչ են զբաղվում այդ հարցով: Մինչդեռ այդ շատ հետաքրքրական հարց է: Ի՞նչ են արտադրանքի աճի տոկոսները և իրապէս ի՞նչ

և թաղնաված աճի յուրաքանչյուր տոկոսի հետևը: Վերցնենք, որինակ, 1925 թվականը, վերականգնման ժամանակաշրջանը: Այն ժամանակ արտադրանքի տարեկան աճը 66% էր: Արդյունաբերության համախառն արտադրանքը կազմում էր 7-700 միլիոն ռուբլի: Այն ժամանակ 66% աճը բացարձակ թվերով կազմում էր 3 միլիարդից ավելի: Հետևաբար, աճի յուրաքանչյուր տոկոսը այն ժամանակ հավասար էր 45 միլիոն ռուբլու: Հիմա վերցնենք 1928 թվականը: Նա ավելի աճի 26%, այսինքն՝ տոկոսային հարաբերությունը համարյա յերեք անգամ պակաս, քան 1925 թվականը: Արդյունաբերության համախառն արտադրանքն այն ժամանակ կազմում էր 15-500 միլիոն ռուբլի: Ամբողջ տարեկան աճը բացարձակ թվերով կազմեց 3-280 միլիոն ռուբլի: Հետևաբար, աճի յուրաքանչյուր տոկոսն այն ժամանակ հավասար էր 126 միլիոն ռուբլու, այսինքն՝ կազմում էր համարյա յեռասուսիս ավելի մեծ դոմար, քան 1925 թ., յերբ մենք ունեյինք աճի 66%: Վերցնենք, վերջապես, 1931 թվականը: Նա ավելի աճի 22%, այսինքն՝ յերեք անգամ ավելի պակաս, քան 1925 թվականին: Արդյունաբերության համախառն արտադրանքն այն ժամանակ կազմում էր 30-800 միլիոն ռուբլի: Ամբողջ աճը բացարձակ թվերով 5-600 միլիոն ռուբլուց ավելի յեղավ: Հետևաբար, աճի յուրաքանչյուր տոկոսը կազմեց ավելի քան 250 միլիոն ռուբլի, այսինքն՝ վեց անգամ ավելի, քան 1925 թվականին, յերբ մենք ունեյինք աճի 66%, և կրկնասուսիս ավելի, քան 1928 թվականին, յերբ մենք ունեյինք աճի ավելի քան 26%:

Ի՞նչ է ստում այս ամենը: Այն, Վոր արտադրանքի աճի տեմպերն ուսումնասիրելիս չի կարելի սահմանափակվել աճի տոկոսների միմիայն ընդհանուր դոմարի քննարկմամբ, — պետք է դիտենալ նաև, թե ինչ է թաղնաված աճի յուրաքանչյուր տոկոսի հետևը, և Վորն է արտադրանքի տարեկան աճի ընդհանուր դոմարը: Մենք, որինակ, 1933 թվականի համար վերցնում ենք աճի 16%, այսինքն՝ չորս անգամ ավելի պակաս, քան 1925 թվականին: Բայց այդ դեռ չի նշանակում, թե այդ տարվա արտադրանքի աճը նույնպես չորս անգամ ավելի պակաս կլինի: Արտադրանքի աճը 1925 թվականին բացարձակ թվերով 3 միլիարդ ռուբլուց ավելի կազմեց, իսկ յուրաքանչյուր տոկոսը հավասար էր 45 միլիոն ռուբլու: Տարակուսելու հիմք չկա, Վոր 1933 թվին արտադրանքի աճը բացարձակ թվերով, աճի նորման ընդունե-

լով 16%, կկազմի Վոր պակաս քան 5 միլիարդ ռուբլի, այսինքն՝ համարյա կրկնասուսիս ավելի, քան 1925 թվականին. իսկ աճի յուրաքանչյուր տոկոսը հավասար կլինի առնվազն 320—340 միլիոն ռուբլու, այսինքն՝ առնվազն յոթն անգամ ավելի մեծ դոմար կկազմի, քան 1925 թվականի աճի յուրաքանչյուր տոկոսը:

Ահա թե ինչ կերպարանք է ստանում դործն, ընկերներ, յեթե կոնկրետորեն քննենք աճի տեմպերի ու տոկոսների հարցը:

Այսպես է չորս տարում կատարված հնգամյակի հանրագումարների բանն արդյունաբերության բնագավառում:

ՉՈՐՍ ՏԱՐՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՀՆԳԱՄՅԱԿԻ
ՀԱՆՐԱԳՈՒՄԱՐՆԵՐԸ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ
ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ

Անցնենք չորս տարում կատարված հնգամյակի հանրագումարներին գյուղատնտեսության բնագավառում:

Հնգամյակը գյուղատնտեսության բնագավառում՝ կոլեկտիվացման հնգամյակ է: Ինչի՞ց եր յեղնում կուսակցությունը՝ անցկացնելով կոլեկտիվացումը:

Կուսակցությունը յեղնում եր այն բանից, վոր պրոլետարիատի զեկտատուրան ամրացնելու և սոցիալիստական հասարակություն կառուցելու համար, բացի ինդուստրացումից, անհրաժեշտ է նաև անցումն մանր անհատական գյուղացիական տնտեսությունից դեպի տրակտորներով ու ժամանակակից գյուղատնտեսական մեքենաներով ոժտված խոշոր կոլեկտիվ գյուղատնտեսություն, վորպես խորհրդային իշխանության միակ հաստատուն հիմքը գյուղում:

Կուսակցությունը յեղնում եր այն բանից, վոր առանց կոլեկտիվացման անհնարին է մեր յերկիրը դուրս բերել սոցիալիզմի տնտեսական ֆունդամենտը կառուցելու լայն ճանապարհը, անհնարին է բազմամիլիոն աշխատավոր գյուղացիությունն ազատել աղքատությունից և սգիտությունից:

Լենինն ասում եր, վոր

«Մանր տնտեսությամբ կարիքից դուրս չես պրծնի» (տե՛ս հ. XXIV, էջ 540):

Լենինն ասում եր, վոր

«Յեթե մենք, առաջվա նման, նստած մնանք մանր տըն-

տեսությունների մեջ, թեկուզ իբրև ազատ քաղաքացիներ ազատ հողի վրա, միևնույն է՝ մեզ անխուսափելի կործանում է սպառնում» (տե՛ս հ. XX, էջ 417):

Լենինն ասում եր, վոր

«Միմիայն ընդհանուր, արտելային, ընկերային աշխատանքի ողնությունը կարելի յե դուրս դալ այն փակուղուց, վորի մեջ քչել է մեզ իմպերիալիստական պատերազմը» (տե՛ս հ. XXIV, էջ 537):

Լենինն ասում եր, վոր

«Անհրաժեշտ է անցնել հողի ընդհանուր մշակության՝ որինակելի խոշոր տնտեսություններում. առանց դրան չի կարելի դուրս դալ այն փուլումից, այն ուղղակի հուսահատական դրությունից, վորի մեջ գտնվում է Ռուսաստանը» (տե՛ս հ. XX, էջ 418):

Յեղնելով դրանից՝ Լենինը յեկավ հետևյալ հիմնական յեղրակացությունը.

«Միմիայն այն դեպքում, յեթե հաջողվի դործով ցույց տալ գյուղացիներին հողի հանրային, կոլեկտիվ, ընկերային, արտելային մշակման առավելությունները, միմիայն յեթե հաջողվի ոգնել գյուղացուն ընկերային, արտելային տնտեսության միջոցով, այն ժամանակ միայն բանվոր դասակարգը, վոր իր ձեռքումն է պահում պետական իշխանությունը, իրոք կապացուցի գյուղացուն իր իրավացիությունը, իրոք հաստատուն կերպով և ինչպես հարկն է իր կողմը կգրավի բազմամիլիոն գյուղացիական մասսային» (տե՛ս հ. XXIV, էջ 579—580):

Լենինի այս դրույթներից եր յեղնում կուսակցությունը՝ կիրառելով գյուղատնտեսության կոլեկտիվացման ծրագիրը, հենգամյակի ծրագիրը գյուղատնտեսության բնագավառում:

Այդ կապակցությամբ հնգամյակի խնդիրը գյուղատնտեսության վերաբերմամբ այն եր, վոր տրակտորներ ու ժամանակակից գյուղատնտեսական մեքենաներ ոգտադործելու հնարավորությունից դուրկ ցիրուցան ու մանր անհատական գյուղացիական տնտեսությունները միավորի բարձր զարգացած գյուղատնտեսություն բոլոր ժամանակակից դործիքներով սպառազինված խոշոր կոլեկտիվ տնտեսությունների մեջ, իսկ ազատ հողերը ծածկի որինակելի պետական տնտեսություններով, խորհրդային տնտեսություններով:

Գյուղատնտեսության հնգամյակի խնդիրն այն եր, վոր

ԽՍՀՄ-ին մանր-գյուղացիական և հետամնաց յերկրից խոշոր գյուղատնտեսության յերկրի փոխարկի, մի գյուղատնտեսության, վորը կազմակերպված է կոլեկտիվ աշխատանքի հիմունքով և առավելագույն ապրանքայնություն է տալիս:

Ի՞նչ արդյունքի հասավ կուսակցությունը, իրագործելով չորս տարում կատարելիք հնգամյակի ծրագիրը գյուղատնտեսության բնագավառում: Իրագործե՞ց արդյոք նա այդ ծրագիրը, թե՞ կրախի յենթարկվեց:

Կուսակցությունը հասավ այն բանին, վոր մի յերեք տարվա ընթացքում կարողացավ կազմակերպել ավելի քան 200 հազար կոլեկտիվ տնտեսություններ և մոտ 5 հազար հացահատիկային ու անասնաբուծական ուղղություն ունեցող խորհրդատնտեսություններ, միաժամանակ 4 տարվա ընթացքում 21 միլիոն հեկտարով ընդարձակելով ցանքային տարածությունները:

Կուսակցությունը հասավ այն բանին, վոր կոլտնտեսությունները ներկայումս միավորում են գյուղացիական տնտեսությունները 60%-ից ավելին, ընդգրկելով բոլոր գյուղացիական հողամասերի 70%-ից ավելին, վոր նշանակում է հնգամյակի յեռապատիկ գերակատարում:

Կուսակցությունը հասավ այն բանին, վոր անհատական գյուղացիական տնտեսությունների գերակշռության ժամանակաշրջանում միջերկր 500—600 միլիոն փութ ապրանքային հացահատիկի փոխարեն՝ ներկայումս հնարավորություն ունի միջերկր տարեկան 1200—1400 միլիոն փութ հացահատիկ:

Կուսակցությունը հասավ այն բանին, վոր կուլակությունը վորպես դասակարգ ջախջախված է, թեև դեռ չի վոչնչացված, աշխատավոր գյուղացիությունն ազատագրված է կուլակային ստրկացումից ու շահագործումից, և գյուղում ամուր տնտեսական բազա, կոլեկտիվ տնտեսության բազա յե ստեղծված խորհրդային իշխանության համար:

Կուսակցությունը հասավ այն բանին, վոր ԽՍՀՄ-ն մանր-գյուղացիական տնտեսության յերկրից արդեն փոխակերպվել է աշխարհիս ամենախոշոր գյուղատնտեսության յերկրի:

Ընդհանուր առմամբ սրանք են չորս տարում կատարված հնգամյակի հանրագումարները գյուղատնտեսության բնագավառում:

Այժմ ինքներդ դատեցեք. ի՞նչ արժեք ունի այս ամենից հետո բուրժուական մամուլի չաղակրատությունը կոլեկտիվացման

«կրախի», հնգամյակի տապալման մասին գյուղատնտեսության բնագավառում:

Իսկ ի՞նչ դրուժյան մեջ է գյուղատնտեսությունը կապիտալիստական յերկրներում, վորոնք ներկայումս գյուղատնտեսական դաժան ճգնաժամ են ապրում:

Ահա բոլորին հայտնի պաշտոնական տվյալները.

Հացահատիկ արտադրող հիմնական յերկրներում ցանքային տարածությունները կրճատված են 8—10%-ով: Բամբակի ցանքերի տարածությունները ՀԱՄՆ-ում կրճատված են 15%-ով, շաքարի ճակնդեղինը՝ Գերմանիայում ու Չեխո-Սլովակիայում—22—30%-ով, վուլինը՝ Լիտվայում և Լատվիայում—25—30 տոկոսով:

Ամերիկական գյուղատնտեսական գեպարտամենտի տվյալներով՝ ՀԱՄՆ-ի գյուղատնտեսության համախառն արտադրանքի արժեքը 1929 թվի 11 միլիարդ դոլլարից՝ 1932 թվին իջել է 5 միլիարդի, այսինքն՝ ավելի քան 50%-ով: Նույն տեղում հացահատիկի համախառն արտադրանքի արժեքը 1929 թվի 1288 միլիոն դոլլարից՝ 1932 թվին իջել է 391 միլիոն դոլլարի, այսինքն՝ ավելի քան 68%-ով: Բամբակինը նույն տեղում 1929 թվի 1389 միլիոն դոլլարից՝ 1932 թվին իջել է 397 միլիոն դոլլարի, այսինքն իջել է ավելի քան 70%-ով:

Չե՞ն խոսում արդյոք այս բոլոր փաստերը գյուղատնտեսության խորհրդային սխտեմի առավելությունների մասին՝ կապիտալիստական սխտեմի հանդեպ: Չե՞ն խոսում արդյոք այս փաստերն այն մասին, վոր կոլտնտեսությունները տնտեսության ավելի կենսունակ ձև են, քան միանձնյա ու կապիտալիստական տնտեսությունները:

Ասում են, թե կոլտնտեսություններն ու խորհրդատնտեսությունները լիովին ել շահաբեր չեն, թե նրանք ահագին միջոցներ են կլանում, թե այդպիսի ձեռնարկություններ պահելը վոչ մի իմաստ չունի, թե ավելի նպատակահարմար կլինեք ցրել այդ ձեռմաստ չունի, թե ավելի նպատակահարմար կլինեք ցրել այդ ձեռմաստ չունի, թե ավելի նպատակահարմար կլինեք ցրել այդ ձեռմաստ չունի: Նարկուլությունները, թողնելով նրանցից շահավետները միայն: Բայց այդպես կարող են խոսել միմիայն այն մարդիկ, վորոնք Բայց այդպես կարող են թողնելով ժողովրդական տնտեսության հարցերում, վոչինչ չեն հասկանում ժողովրդական տնտեսության հարցերում, եկոնոմիկայի հարցերում: Միքանի տարի առաջ տեքստիլ ձեռնարկությունների կեսից ավելին անշահաբեր եր: Մեր ընկերների մի մասն այն ժամանակ առաջարկում եր փակել այդ ձեռնարկությունները: Ի՞նչ կլինեք մեր բանը, յեթե մենք լսած լինեյինք նրանց: Մենք մեծագույն վոճրագործությունը կատարած կլինե-

յինք յերկրի հանդեպ, բանվոր դասակարգի հանդեպ, վարսովհետև
դրանով մենք կքայքայեինք մեր բարձրացող արդյունաբերու-
թյունը: Իսկ ինչպես վարվեցինք մենք այն ժամանակ: Մենք մի
տարուց ավելի սպասեցինք և հասանք այն բանին, վոր ամբողջ
տեքստիլ արդյունաբերությունը շահաբեր դարձավ: Իսկ մեր ավ-
տոգործարանը Գորկի քաղաքում: Չե՞ վոր նա ել առաջիմ ան-
շահաբեր է: Արդյոք չե՞ հրամայի փակել այն: Կամ մեր աև մե-
տաղապործությունը, վորը նույնպես առաջիմ անշահաբեր է:
Չփակե՞նք արդյոք այն, ընկերներ: Յեթե այդպես նայենք շահա-
բերությունը, այն ժամանակ մենք պետք է ըստ ամենայնի դար-
գացենք արդյունաբերության միմիայն միջանի ճյուղերը, վո-
րոնք ամենից ավելի ռենտա յեն բերում, որինակ՝ հրուշակային
արդյունաբերությունը, արագաց արդյունաբերությունը, պար-
ֆյումեիցիայի, տրիկոտաժի արդյունաբերությունը, փանկական
խաղալիքների արդյունաբերությունը և այլն: Յեռ, իհարկե,
դեմ չեմ արդյունաբերության այդ ճյուղերի դարգացմանը: Ընդ-
հակառակը, նրանք պետք է դարգացվեն, վորովհետև նրանք
նույնպես հարկավոր են բնակչությանը: Բայց նախ, նրանք չեն
կարող դարգացվել առանց սարքավորման ու վառելիքի, վոր
նրանց տալիս է ծանր ինդուստրիան: Յերկրորդ, նրանց վրա չի
կարելի հիմնել ինդուստրացումը: Ահա թե ինչն է բանը, ըն-
կերներ:

Շահաբերության վրա չի կարելի նայել չարժիարար, տվյալ
րոպեյի տեսակետից: Շահաբերությունը պետք է վերցնել համա-
ժողովրդական տնտեսության տեսակետից, միջանի տարվա տրա-
մատով: Միմիայն այդպիսի տեսակետը կարող է իրոք լենինյան,
իրոք մարքսիստական կոչվել: Յեվ այդ տեսակետը պարտադիր է
վո՛չ միայն արդյունաբերության նկատմամբ, այլև ե՛լ ավելի մեծ
չափով կոլտնտեսությունների ու խորհտնտեսությունների նկատ-
մամբ: Մտածեցե՛ք միայն. մի յերեք տարվա ընթացքում մենք
ստեղծել ենք 200 հազարից ավելի կոլտնտեսություն և մոտ 5
հազար խորհտնտեսություն, այսինքն՝ մենք ստեղծել ենք բոլորո-
վին նոր խոշոր ձեռնարկություններ, վորոնք նույնպիսի նշանա-
կություն ունեն դյուղատնտեսության համար, ինչպես գործարան-
ներն ու ֆաբրիկաները՝ արդյունաբերության համար: Մի յերկրի
անուն ավեք, վորը կարողացած լինի յերեք տարվա ընթացքում
ստեղծել վոչ թե 205 հազար նոր խոշոր ձեռնարկություններ, այլ
թեկուզ 25 հազար այդպիսի ձեռնարկություններ: Դուք չեք կա-

րող այդպիսի անուն տալ, վորովհետև այդպիսի յերկիր չկա և
չի յեղել: Իսկ մենք ստեղծել ենք 205 հազար նոր ձեռնարկու-
թյուններ դյուղատնտեսության մեջ: Յեվ ահա, բանից դուրս է
գալի՝ տշխարհում մարդիկ կան, վորոնք պահանջում են, վոր
այդ ձեռնարկությունները միանգամից շահաբեր դառնան, իսկ
յեթե նրանք միանգամից շահաբեր չդառնան, ապա քանդել ու
ցրել տալ դրանք: Պարզ չե՞ արդյոք, վոր Հերոստրատի դափնի-
ները փախցրել են այդ ավելի քան տարրինակ մարդկանց քունը:

Խոսելով կոլտնտեսությունների ու խորհտնտեսությունների
անշահաբերության մասին՝ յես ամենևին չեմ ուզում առել, թե
նրանք բոլորն ել անշահաբեր են: Բոլորովին վոչ: Ամենքին
հայտնի յե, վոր ներկայումս արդեն կան մի ամբողջ շարք վե-
րին առտիճանի շահաբեր կոլտնտեսություններ ու խորհտնտեսու-
թյուններ: Մենք ունենք հազարավոր կոլտնտեսություններ ու
տանյակներով խորհտնտեսություններ, վորոնք այժմ արդեն մի-
անգամայն շահաբեր են: Այդ կոլտնտեսություններն ու խորհ-
տնտեսությունները մեր կուսակցության պարծանքն են, խորհը-
դային իշխանության պարծանքը: Կոլտնտեսություններն ու խորհ-
տնտեսությունները, իհարկե, ամեն տեղ ել միատեսակ չեն: Կոլ-
տնտեսությունների ու խորհտնտեսությունների մեջ կան հները,
նորերը և բոլորովին յերիտասարդները: Դրանք դեռ թույլ, դեռ
լիովին չկազապարված տնտեսական օրգանիզմներ են: Դրանք ի-
րենց կազմակերպական չինարարության մեջ ապրում են մոտա-
վորապես նույն այն ժամանակաշրջանը, վոր ապրում էին մեր
գործարաններն ու ֆաբրիկաները 1920—1921 թվականներին:
Հասկանալի յե, վոր նրանց մեծամասնությունը դեռ չի կարող
շահաբեր լինել: Բայց վոր նրանք շահաբեր կդառնան 2—3 տարվա
ընթացքում, այնպես, ինչպես շահաբեր դարձան մեր գործարան-
ներն ու ֆաբրիկաները 1921 թվից հետո, — դրանում վոչ մի տա-
րակույս չի կարող լինել: Մերժել նրանց օգնություն ու աջակ-
ցություն ցույց տալ այն հիմունքով, թե նրանք վոչ բոլորն են
շահաբեր տվյալ րոպեյին, — նշանակում է մեծազույն վոճիրը
գործել բանվոր դասակարգի ու դյուղացիության հանդեպ: Մի-
միայն ժողովրդի թշնամիները և հակահեղափոխականները կարող
են հարց դնել կոլտնտեսությունների ու խորհտնտեսությունների
պետք չլինելու մասին:

Կենսագործելով հնգամյակը դյուղատնտեսության վերաբեր-
մամբ՝ կուսակցությունն արագացված տեմպերով եր իրականաց-

նում կոլեկտիվացումը: Ճի՞շտ եր վարվում արդյոք կուսակցու-
թյունը՝ կիրառելով կոլեկտիվացման արագացված տեմպերի քա-
ղաքականություն: Այո՛, անպայման ճիշտ, թեև այստեղ գործն
առանց վորոշ չափազանցությունների չվերջացավ: Կիրառելով
կուլակությունը վորպես դասակարգ վերացնելու քաղաքականու-
թյունը և արմատահան անելով կուլակային բները՝ կուսակցու-
թյունը չեր կարող կես ճանապարհին կանգ առնել, — նա պետք է
այդ գործը մինչև վերջը հասցնե:

Այս — առաջին:

Յերկրորդ, ունենալով, մի կողմից, տրակտորներ ու գյու-
ղատնտեսական մեքենաներ և, մյուս կողմից, ոգավելով հողի
մասնավոր սեփականություն բացակայությունից (հողի ազդա-
նացումը)՝ կուսակցությունը բոլոր հնարավորություններն ու-
նե՞ր արագացնելու գյուղատնտեսության կոլեկտիվացումը: Յե՛վ նա
իրոք այս բնագավառում մեծագույն հաջողություն ձեռք բերեց,
վորովհետև յեռապատիկ դերակատարեց կոլեկտիվացման հնգա-
մյակի ծրագիրը:

Նշանակո՞ւմ է այդ արդյոք, վոր մենք պետք է կոլեկտիվացման
արագացրած տեմպերի քաղաքականություն վարենք նաև յերկ-
րորդ հնգամյակի ժամանակաշրջանում: Վո՛չ, չի նշանակում:
Բանն այն է, վոր մենք հիմնականում արդեն ավարտել ենք ԽՍՀ
Միության հիմնական շրջանների կոլեկտիվացումը: Հետևաբար,
ավելին ենք կատարել այդ բնագավառում, քան կարելի յեր սպա-
սել: Յե՛վ հիմնականում չե թե միայն ավարտել ենք կոլեկտիվա-
ցումը: Մենք հասել ենք այն բանին, վոր գյուղացիության հըս-
կայական մեծամասնության գիտակցության մեջ կոլտնտեսու-
թյունները դարձել են տնտեսության ամենից ավելի բնորոշների
ձևը: Այդ ահագին նվաճում է, ընկերներ՛ր: Սրանից հետո արժե՞
արդյոք գլխապատառ դես ու դեն ընկնել կոլեկտիվացման արագ
տեմպերի վերաբերմամբ: Պարզ է, վոր, չարժե:

Հիմա հարցը կոլեկտիվացման արագացրած տեմպերի մասին
չե արդեն և ավելի ևս այն մասին չե՝ լինե՞ն արդյոք կոլտնտե-
սությունները, թե չլինեն: այդ հարցն արդեն լուծված է գրական
իմաստով: Կոլտնտեսություններն ամրապնդված են, և ուղին
դեպի հին, միանձնյա տնտեսությունը փակված է վերջնականա-
պես: Հիմա խնդիրն այն է, վորպեսզի ամրացնենք կոլտնտեսու-
թյունները կազմակերպորեն, դուրս չպրտենք այնտեղից վնասա-
րարական տարրերին, ընտրենք իսկական, ստուգված բուլչեիկյան

կադրեր կոլտնտեսությունների համար և կոլտնտեսություններն՝
իրոք բուլչեիկյան դարձնենք:

Այդ է հիմա գլխավորը:

Այսպես է չորս տարում կատարված հնգամյակի բանը դյու-
ղատնտեսության բնագավառում:

ՋՈՐՍ ՏԱՐՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՀՆԳԱՄՅԱԿԻ ՀԱՆՐԱ-
ԳՈՒՄԱՐՆԵՐԸ ԲԱՆՎՈՐՆԵՐԻ ՈՒ ԳՅՈՒՂԱՑԻՆԵ-
ՐԻ ՆՅՈՒԹԱԿԱՆ ԴՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ
ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ

Յեռ վերը խոսքի արդյունաբերության ու գյուղատնտեսու-
թյան բնագավառում ունեցած հաջողությունների մասին, արդյու-
նաբերության ու գյուղատնտեսության վերելքի մասին ԽՍՀՄ-
ում: Ի՞նչ արդյունքներ ունեցան այդ հաջողությունները բան-
վորների ու գյուղացիների նյութական դրուժյան բարելավման
տեսակետից: Վորո՞նք են արդյունաբերության ու գյուղատնտե-
սության բնագավառում մեր ունեցած հաջողությունների հիմնա-
կան արդյունքները՝ աշխատավորների նյութական դրուժյան ար-
մատական բարելավման տեսակետից:

Արդյունքները, նախ և առաջ, այն են, վոր վոչնչացված է
գործազրկությունը, և բանվորների մեջ վերացված է անվստահու-
թյունը վաղվա որվա նկատմամբ:

Յերկրորդ, դրանք այն են, վոր համարյա ամբողջ գյուղա-
ցիական չբավորությունն ընդգրկված է կոլտնտեսային շինարա-
րության մեջ, այս հիմքի վրա խարխլված է գյուղացիության
չերտավորումը կոլակների ու չբավորների, և այդ կապակցու-
թյամբ գյուղում վոչնչացված է աղքատացումն ու պառպերիզմը:

Այս ահադին նվաճումն է, ընկերներ, վորի մասին վոչ մի
բուրժուական պետություն յերազել չի կարող, թեկուզ հենց նա-
լինի ամենից ավելի «գեմոկրատական» պետությունը:

Մեզ մոտ, ԽՍՀՄ-ում, բանվորները վաղուց արդեն մոռացել
են գործազրկությունը: Մի յերեք տարի առաջ մենք ունեյինք մոտ

մեկուկես միլիոն գործազուրկ: Ահա յերկու տարի յե, վոր մենք
վոչնչացրել ենք գործազրկությունը: Յեվ բանվորներն այդ ժա-
մանակվա ընթացքում արդեն կարողացել են մոռանալ գործա-
զրկության մասին, նրա ճնշման, նրա սարսափների մասին: Հա-
պա մի նայեցե՛ք կապիտալիստական յերկիրներին, ի՞նչ սարսա-
փելի բաներ են կատարվում այնտեղ գործազրկության հողի վրա:
Այդ յերկիրներում ներկայումս կան 30—40 միլիոնից վոչ պակաս
գործազուրկներ: Ի՞նչ մարդիկ են դրանք: Նրանց մասին սովորա-
բար ասում են, թե նրանք «կորած մարդիկ են»:

Նրանք ամեն որ ձգտում են աշխատանք գտնել, աշխատանք
են վորոնում, նրանք պատրաստ են ընդունելու աշխատանքի հա-
մարյա ամեն պայման, բայց նրանց աշխատանքի չեն ընդունում,
վորովհետե նրանք «ավելորդ» մարդիկ են: Յեվ այս այն ժամա-
նակ, յերբ ապրանքների ու մթերքների ահադին մասսաներ վատ-
նըվում են կապիտալիստների ու կալվածատերերի՝ բախտից փայ-
փայլած զավակների քմահաճույքների համար: Գործազուրկներին
մերժում են ուտելիք տալ, վորովհետե նրանք վոչինչ չունեն
վճարելու ուտելիքի համար: Նրանց ոթկան չեն տալիս, վորովհե-
տե նրանք վոչինչ չունեն վճարելու բնակարանի համար: Ինչո՞ւ
և վորո՞ւնեղ են ապրում նրանք: Նրանք ապրում են աղաների սե-
ղանի խղճուկ փչրանքներով, պեղումներ կատարելով աղբի ար-
կղղներում, վորտեղ նրանք ուտելիքի նեխված մնացորդներ են
գտնում, ապրում են մեծ քաղաքների հետ ընկած մասերում, իսկ
ամենից ավելի՝ քաղաքից դուրս, գործազուրկների ձեռքով ար-
կղղների տախտակներից ու ծառերի կեղևից շտապ շինված հյուղե-
րում: Բայց սա ամենը չէ: Գործազրկությունից տառապում են
վոչ միայն գործազուրկները: Նրանից տառապում են նաև գործ-
ունեցող բանվորները: Տառապում են, վորովհետե մեծ քանա-
կությամբ գործազուրկների առկայությունն անկայուն դրուժյուն
է ստեղծում նրանց համար արտադրության մեջ, անվստահու-
թյուն դեպի վաղվան որը: Այսոր նրանք աշխատում են ձեռնար-
կության մեջ, բայց նրանք համոզված չեն, թե վաղն արթնա-
նալով՝ չեն իմանա, վոր իրենց արդեն արձակել են:

Ջորս տարում կատարված հնգամյակի հիմնական նվաճում-
ներից մեկն այն է, վոր մենք վոչնչացրինք գործազրկությունը և
ԽՍՀՄ-ի բանվորներին ազատեցինք նրա սարսափներից:

Հենց այդ նույնը պետք է ասել նաև գյուղացիների մասին:
Նրանք նույնպես մոռացան գյուղացիության՝ կոլակների ու
չբավորների չերտավորվելու մասին, կոլակների կողմից չբավո-

բուժքան շահագործվելու մասին, այն տնտեսական քայքայման մասին, վոր ամեն տարի հարյուր հազարավոր ու միլիոնավոր չքավորների մուրացկան եր դարձնում: Մի յերեք-չորս տարի սրանից առաջ գյուղացիներին մեջ մեր ամբողջ գյուղացիական բնակչության առնվազն 30%-ը չքավոր եր: Այդ ավելի քան տասնյակ միլիոնավոր մարդ եր անում: Իսկ ավելի առաջ, մինչև Հոկտեմբերյան հեղափոխությունը, չքավորները կազմում եյին գյուղացիական բնակչության վոչ պակաս քան 60%-ը: Ի՞նչ են չքավորները: Դրանք այնպիսի մարդիկ են, վորոնց տնտեսության համար սովորաբար պակասում եյին կամ սերմացուն, կամ ձին, կամ գործիքները, կամ թե պակասում եյին այդ բոլոր բաները միասին վերցրած: Չքավորներն այնպիսի մարդիկ են, վորոնք կիսաքաղց եյին սպրում ե, վորպես կանոն, կուլակների ստրկության մեջ եյին, իսկ հին ժամանակները՝ թե՛ կուլակների ե թե՛ կալվածատերերի ստրկության մեջ: Դեռ բոլորովին վերջերս մոտ մեկուկես միլիոն, իսկ յերեմն նույնիսկ ամբողջ յերկու միլիոն չքավորներ յուրաքանչյուր տարի ուղևորվում եյին հարավ—Հյուսիսային Կովկաս ու Ուկրաինա—աշխատանք գտնելու՝ իբրև կուլակների, իսկ ե՛լ ավելի առաջ—իբրև կուլակների ու կալվածատերերի վարձավորներ: Ե՛լ ավելի մեծ քանակությամբ այդպիսի չքավոր գյուղացիներ յուրաքանչյուր տարի ընկնում եյին գործարանների դռները, լցնելով գործազուրկների շարքերը: Յե՛ւ մի—միայն չքավորները չեյին, վոր այդպիսի աննախանձելի դրության մեջ եյին: Միջակների ուղիղ կեսն ել դռնվում եր նույնպիսի կարիքի ու զրկանքների մեջ, ինչպես չքավորները: Այդ ամենի մասին գյուղացիներն արդեն մոռացել—սրբել են:

Ի՞նչ տվեց չորս տարում կատարված հնգամյակը չքավորներին ու միջակների ստորին խավերին: Նա խաբխից ու ջախջախեց կուլակությունը վորպես դատաւարդ՝ ազատագրելով չքավորներին ու միջակների ուղիղ կեսը կուլակային ստրկացումից: Նա նրանց ներգրավեց կոլտնտեսությունները ե նրանց համար հաստատուն գրություն ստեղծեց: Նա դրանով իսկ վոչնչացրեց գյուղացիության շերտավորվելու, այն ե՛՛ վորպես շահագործողները—կուլակների ու շահագործվողների—չքավորների շերտավորվելու հնարավորությունը: Նա կոլտնտեսություններում յեղած չքավորությանը ե միջակների ստորին խավերին հասցրեց ազատ—հոգիված մարդկանց գրության, դրանով վոչնչացնելով գյուղացիության տնտեսական քայքայման ու աղքատացման սրտցեսը: Այժմ մեզանում արդեն չկան այնպիսի դեպքեր, վոր ամեն տարի մի-

լիոնավոր գյուղացիներ պոկվեն իրենց տեղից ե դատումի հեռան հեռավոր յերկիրներ: Ներկայումս, վորպեսզի գյուղացուն իր սեփական կոլտնտեսությունից դուրս վորեւ տեղ աշխատանքի ուղարկենք, հարկավոր ե պայմանագիր կնքել կոլտնտեսության հետ ե դեռ կոլտնտեսականի համար ապահովել նաև ձրի փոխադրությունը յերկաթուղով: Այժմ մեզանում արդեն չկան այնպիսի դեպքեր, վոր հարյուր հազարավոր ու միլիոնավոր գյուղացիներ տնտեսապես քայքայվեն ե ֆարերկանների ու գործարանների շեմքերը մաշեն: Այդ յեղել ե, բայց վաղուց անցել ե: Այժմ գյուղացին ապահովված տնտեսատեր ե, կոլտնտեսության անդամ, կոլտնտեսության, վորն իր տրամադրության տակ ունի աբախ—տունք, գյուղատնտեսական մեքենաներ, սերմֆոնդեր, պահեստի ֆոնդեր ե այլն ե այլն:

Ահա թե ինչ տվեց հնգամյակը չքավորությանն ու միջակներին ստորին խավերին:

Ահա թե վորն ե հնգամյակի հիմնական նվաճումների ելությունը՝ բանվորների ու գյուղացիների նյութական դրության բարելավման բնագավառում:

Բանվորների ու գյուղացիների նյութական դրության բարելավման բնագավառում ձեռք բերված այդ հիմնական նվաճումների հետևանքով՝ առաջին հնգամյակում մենք ունենք հետևյալը.

ա) խոշոր արդյունաբերության մեջ աշխատող բանվորների ու ծառայողների թվի կրկնակի աճում 1928 թվի համեմատությամբ, վորով հնգամյա պլանը գերադասարվել ե 57%-ով.

բ) Ժողովրդական յեկամտի աճում, —հետևաբար՝ բանվորների ու գյուղացիների յեկամտների աճում, —վորը 1932 թվին հասել ե 45,1 միլիարդ ուրբու, այսինքն՝ 1928 թվի համեմատությամբ ավելացել ե 85%-ով.

գ) խոշոր արդյունաբերության մեջ աշխատող բանվորների ու ծառայողների տարեկան միջին աշխատավարձի աճում 1928 թվի համեմատությամբ 67%-ով, վորով հնգամյակը գերադասարված ե 18%-ով.

դ) առօրյա կյան ապահովագրության ֆոնդի աճում 1928 թվի համեմատությամբ 292%-ով (1932 թվին 4.120 միլիոն ուրբի՝ 1928 թվի 1050 միլիոն ուրբու դիմաց), վորով հնգամյա պլանը գերադասարված ե 111%-ով.

ե) հանրային սննդի աճում՝ արդյունաբերության վճարական ճյուղերի բանվորների 70-ից ավելի տոկոսի ընդգրկմամբ, վորով հնգամյակը գերադասարված ե վեց անգամ:

Իհարկէ, մենք դեռ չենք հասել այն բանին, վոր լիովին ապահովենք բանվորների ու գյուղացիների նյութական պահանջները: Յեւ հազիվ թէ մենք այդ բանին հասնենք մերձավորագույն տարիների ընթացքում: Բայց մենք անտարակույս հասել ենք այն բանին, վոր մեզանում տարեցտարի բարելավվում է բանվորների ու գյուղացիների նյութական դրությունը: Այս մասին կարող են կասկածել գուցե միմիայն խորհրդային իշխանութւյան յերգվյալ թշնամիները, կամ գուցե բուրժուական մամուլի միջանի ներկայացուցիչները, դրանց թվում նաեւ այդ մամուլի Մոսկւայի թղթակիցների մի մասը, վորոնք ժողովուրդների եկոնոմիկայից և աշխատավորների դրությունից հասկանում են հազիվ թէ ալելի, քան, ասենք, Հաբեշտանի թագավորը բարձրագույն մութեմատիկայից:

Իսկ ի՞նչպէս է բանվորների ու գյուղացիների դրությունը կապիտալիստական յերկիրներում:

Ահա պաշտոնական տվյալները:

Կատաստրոֆիկ կերպով աճել է դործազուրկների քանակությունը կապիտալիստական յերկիրներում: ՀԱՄՆ-ում, պաշտոնական տվյալներով, միմիայն մշակող արդյունաբերութւյան մեջ աշխատող բանվորների թիւը 1928 թվականի 8,5 միլիոնից 1932 թվին իջել է 5,5 միլիոնի, իսկ Աշխատանքի ամերիկյան Փեդերացիայի տվյալներով՝ դործազուրկների թիւը ՀԱՄՆ-ում ամբողջ արդյունաբերութւյան դժով 1932 թվականի վերջերքին հասնում էր 11 միլիոն մարդու: Անգլիայում դործազուրկների թիւը, պաշտոնական վիճակագրութւյան տվյալներով, 1928 թվականի 1.290 հազարից 1932 թվականին աճել-դարձել է 2,8 միլիոն մարդ: Գերմանիայում, պաշտոնական տվյալներով, դործազուրկների թիւը 1928 թվականի 1.376 հազարից 1932 թվին աճել է մինչև 5,5 միլիոն: Նույնպիսի պատկեր է նկատվում բոլոր կապիտալիստական յերկիրներում, ըստիւրում պաշտոնական վիճակագրությունը, վորպէս կանոն, պակասեցնում է դործազուրկների մասին յեղած տվյալները, դործազուրկների, վորոնց թիւը կապիտալիստական յերկիրներում տատանվում է 35-ից մինչև 40 միլիոն մարդու միջև:

Սխտեմատիկորեն կատարվում է բանվորների աշխատավարձի կրճատում: Պաշտոնական տվյալներով՝ ՀԱՄՆ-ում միջին ասական աշխատավարձը 1928 թվականի մակարդակի համեմատութւյամբ կրճատվել է 35%-ով, Անգլիայում նույն ժամանակամիջոցում—15%-ով, իսկ Գերմանիայում—մինչև անգամ 50%-ով:

Աշխատանքի ամերիկյան Փեդերացիայի հաշվարկումներով՝ ամերիկյան բանվորների կրած կորուստներն աշխատավարձի իջեցման հետեանքով 1930/31 թվին կազմել են ալելի քան 35 միլիոն դոլար:

Զգալի չափով կրճատվել են բանվորների ապահովագրութւյան առանց այն էլ աննշան ֆոնդերն Անգլիայում ու Գերմանիայում: ՀԱՄՆ-ում ու Ֆրանսիայում բոլորովին կամ գրեթէ բոլորովին բացակայում է դործազուրկների ապահովագրութւյան վորէե ձև, վորի հետեանքով վիթխարի չափով աճում է անտուն բանվորների ու անապաստան յերեխաների թիւը, առանձնապէս ՀԱՄՆ-ում:

Ալելի լավ չէ գյուղացիական մասսաների դրությունը կապիտալիստական յերկիրներում, վորտեղ գյուղատնտեսական ճղնաժամը հիմքից խարխլում է գյուղացիական տնտեսությունը և միլիոնավոր տնտեսապէս քայքայված գյուղացիների ու ֆերմերների մուրացկան է դարձնում:

Սրանք են չորս տարում կատարված հնդամյակի հանրագումարները ԽՍՀՄ-ի աշխատավորների նյութական դրութւյան բարելավման բնագավառում:

ՉՈՐՍ ՏԱՐՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՀՆԳԱՄՅԱԿԻ ՀԱՆՐԱ-
ԳՈՒՄԱՐՆԵՐԸ ՔԱՂԱՔԻ ՅԵՎ ԳՅՈՒՂԻ ՄԻՋԵՎ
ՏԵՂԻ ՈՒՆԵՑՈՂ ԱՊՐԱՆՔԱՊՏՈՒՅՑԻ
ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ

Անցնենք այժմ չորս տարում կատարված հնգամյակի հան-
րապետարների հարցին՝ քաղաքի ու գյուղի միջև տեղի ունեցող
ապրանքապտույտի աճման բնագավառում:

Արդյունաբերության ու գյուղատնտեսության արտադրանքի
վիթխարի աճումը, ապրանքային ավելցուկների աճումը ինչպես
արդյունաբերության, այնպես և գյուղատնտեսության մեջ, վեր-
ջապես, բանվորների ու գյուղացիների պահանջմունքների աճու-
մը, — այս առնչությամբ կարող չտանել և իրոք տարավ գեպի քա-
ղաքի ու գյուղի միջև տեղի ունեցող ապրանքապտույտի աշխու-
ժացում ու բնագավառում:

Արտադրական գոգումը քաղաքի ու գյուղի միջև՝ գոգման
հիմնական ձևն է: Բայց լուրջ միայն արտադրական գոգումը բա-
վական չէ: Այն պետք է լրացնել ապրանքային գոգումով, վո-
րպեսզի կապը քաղաքի ու գյուղի միջև ամուր ու անխզելի դա-
նա: Այդ բանին կարելի չէ հասնել միմիայն խորհրդային առևտու-
րը ծավալելու միջոցով: Սխալ կլիներ կարծել, թե կարելի չէ
խորհրդային առևտուրը ծավալել միմիայն մեկ կանալի, քրինակ,
կոսպերացիայի միջոցով: Խորհրդային առևտրի ծավալման հա-
մար անհրաժեշտ է ոգտագործել բոլոր կանալները — թե՛ կոսպե-
րացիական, թե՛ պետական-առևտրային ցանցը և թե՛ կալաքն-
տեսային առևտուրը:

Միևնույն ժամանակ կարծում են, թե խորհրդային առևտրի և

մանավանդ կոլտնտեսային առևտրի ծավալումը վերադարձ է գե-
պի նեպի առաջին ստադիան: Այդ բոլորովին սխալ է:

Խորհրդային առևտրի, այդ թվում կոլտնտեսային առևտրի,
և նեպի առաջին ստադիայի առևտրի միջև արմատական տարբե-
րություն կա:

Նեպի առաջին ստադիայում մենք թույլ ելինք տալիս կապի-
տալիզմի աշխուժացում, թույլ ելինք տալիս մասնավոր ապրանքա-
պտույտ, թույլ ելինք տալիս մասնավոր առևտրականների, կապի-
տալիստների, սպեկուլանտների «գործունեությունը»:

Այդ քիչ թե չառ աղատ առևտուր էր, սահմանափակված պե-
տության կարգավորող դերով միայն: Այն ժամանակ մասնավոր-
կապիտալիստական սեկտորը յերկրի ապրանքապտույտի մեջ բա-
վական խոչոր տեղ էր զբաղում: Յես չեմ խոսում արդեն այն
մասին, վոր այն ժամանակ մենք չունեցինք վո՛չ այնպիսի զար-
գացած արդյունաբերություն, ինչպես այժմ, վո՛չ էլ կոլտնտե-
սություններ ու խորհրդայինություններ, վորոնք աշխատում են
պլանով և պետության տրամադրության տակ են գնում գյուղա-
տնտեսական մթերքների ու քաղաքային ապրանքների հսկայական
ռեզերվներ:

Կարելի՞ չէ արդյոք ասել, թե մենք ներկայումս նույնպիսի
դրություն ունենք: Իհարկե, այդ ասել չի կարելի:

Նախ՝ չի կարելի խորհրդային առևտուրը մի մակարդակի
վրա դնել նեպի առաջին ստադիայի առևտրի հետ, թեկուզ և
պետության կողմից կարգավորվող առևտրի: Յեթե նեպի առա-
ջին ստադիայի առևտուրը թույլ էր տալիս կապիտալիզմի աշ-
խուժացում և մասնավոր-կապիտալիստական սեկտորի գործու-
նեցությունն ապրանքապտույտի մեջ, ապա խորհրդային առև-
տուրը յերևում է թե՛ մեկի և թե՛ մյուսի ժխտումից: Ի՞նչ բան է
խորհրդային առևտուրը: Խորհրդային առևտուրն առևտուր է
առանց վոքր ու մեծ կապիտալիստների, առևտուր՝ առանց վոքր
ու մեծ սպեկուլանտների: Այդ առանձին տեսակի մի առևտուր է,
վորը մինչև հիմա չի յերեւել պատմության մեջ և վորը կատա-
րում ենք միմիայն մենք, բուլեհիկներս, խորհրդային զարգացման
պայմաններում:

Յերկրորդ, մենք հիմա ունենք բավական զարգացած պետա-
կան արդյունաբերություն և կոլտնտեսությունների ու խորհրդ-
այինությունների մի ամբողջ սխտեմ, վորոնք պետության հա-
մար ապահովում են գյուղատնտեսական ու արդյունաբերական
ապրանքների ահաբեկ ռեզերվներ՝ խորհրդային առևտուրը ծա-

վաճելու համար: Այդ չկար և չեր կարող լինել նեպի առաջին ստադիայի պայմաններում:

Յերբորդ, մենք հասանք այն բանին, վոր վերջին ժամանակաշրջանում ապրանքապտույտից բոլորովին դուրս չարտեցինք մասնավոր առևտրականներին, վաճառականներին, ամեն տեսակ միջնորդներին: Իհարկե, այդ չի բացառում այն, վոր ապրանքապտույտի մեջ, ատավիզմի որենքով, կարող են նորից յերևան գալ մասնավոր առևտրականներ ու սպեկուլանտներ, ոգտագործելով այդ նպատակով իրենց համար ամենից ավելի հարմար ասպարեզը, այն է՝ կոլտնտեսային առևտուրը: Դեռ ավելին. կոլտնտեսականներն իրենք դեմ չեն յերբեմն սպեկուլացիայի դիմելուն, վոր, իհարկե, պատիվ չի բերում նրանց: Բայց այդ վատառողջ յերևույթների դեմ մենք ունենք սպեկուլացիան կասեցնելու և սպեկուլանտներին պատժելու միջոցառումների մասին այն որենքը, վոր խորհրդային իշխանութիւնը հրատարակել է վերջերս: Դուք դիտեք, իհարկե, վոր այդ որենքն առանձին մեղմութեամբ չի տառապում: Դուք կհասկանաք, իհարկե, վոր այդպիսի որենք չի յեղել և չեր ել կարող լինել նեպի առաջին ստադիայի պայմաններում:

Դուք տեսնում եք, վոր այս ամենից հետո խոսել նեպի առաջին ստադիայի առևտրին վերադառնալու մասին՝ նշանակում է վոչինչ, ուղղակի վոչինչ չհասկանալ մեր խորհրդային եկոնոմիկայից:

Մեզ ասում են, թե հնարավոր չե ծավալել առևտուրը, յեթե այն նույնիսկ խորհրդային առևտուր է, առանց դրամական առողջ տնտեսութեան և առողջ վալյուտայի, թե ամենից առաջ հարկավոր է բուժել դրամական տնտեսութիւնը և մեր խորհրդային վալյուտան, վորն իբր թե վոչ մի արժեք չի ներկայացնում: Այդպես են ասում մեզ կապիտալիստական յերկիրների տնտեսագետները: Յես կարծում եմ, վոր այդ հարգելի տնտեսագետները քաղաքատնտեսութիւնից ավելի բան չեն հասկանում, քան, ասենք, Քենտրբերիի արքեպիսկոպոսը հակակրօնական պրոպագանդայից: Ի՞նչպես կարելի յե պնդել, թե մեր խորհրդային վալյուտան վոչ մի արժեք չի ներկայացնում: Մի՞թե սա փաստ չէ, վոր մենք այդ վալյուտայով կառուցել ենք Մագնիտոստրոյը, Դնեպրոստրոյը, Կուզնեցկստրոյը, Ստալինգրադի ու Նարկովի տրակտորային գործարանները, Գորկու ու Մոսկովայի ավտոմոբիլային գործարանները, հարյուր հազարավոր կոլտնտեսութիւններ ու հազարավոր խորհտնտեսութիւններ: Չե՞ն կար-

ծում արդէս այդ պարոնները, վոր այս բոլոր ձեռնարկութեանները դարձանից ու կավից են կառուցւած և վոչ թե վորոշ արժեք ունեցող իսկական շինանյութերից: Ինչո՞վ է ապահովւում խորհրդային վալյուտայի կայունութիւնը, յեթե, իհարկե, նկատի ունենանք յերկրի ապրանքապտույտի մեջ վճողական նշանակութիւն ունեցող կազմակերպւած շուկան և վոչ թե անկազմակերպ շուկան, վորը լոկ ստորագրա նշանակութիւն ունի: Իհարկե, վոչ միայն վոսկու սաչարով: Խորհրդային վալյուտայի կայունութիւնն ապահովւում է ամենից առաջ՝ պետութեան ձեռքում գտնւող ապրանքային մասսաների ահադին քանակութեամբ, վորոնք ապրանքապտույտի մեջ են դրւում կայուն դնութեամբ, վորոնք ապրանքապտույտի մեջ են ժխտել, վոր միմիայն բով: Տնտեսագետներից ո՞վ կարող է ժխտել, վոր միմիայն ՆՍՂՄ-ում դոյութիւն ունեցող այդպիսի ապահովութիւնը վալյուտայի կայունութեան ավելի ռեալ ապահովութիւն է, քան վոսկու ինչպիսի սաչար ուղում է լինի: Յերբեկցե կհասկանա՞նք արդէս կապիտալիստական յերկիրներէ տնտեսագետները, վոր նրանք վերջնականապես խճճւել են վոսկու սաչարի՝ վորպես վալյուտայի կայունութեան միակ ապահովութեան՝ թերութեայի մեջ:

Այդպես է խորհրդային առևտրի ծավալման հետ կապւած հարցերի բանը:

Ի՞նչ ձեռք բերինք մեր հնդամյակի իրականացման հետեանքով խորհրդային առևտրի ծավալման բնադաւառում:

Վորպես հնդամյակի հանրադրումար մենք ունենք.

ա) ավելացում թեթե արդյունաբերութեան արտադրանքի,

վորը 1928 թվականի համեմատութեամբ հասել է 187%-ի:

բ) կոոպերատիւ-պետական մանրածախ ապրանքապտույտի աճում, վորն այժմ 1932 թվականի դներով կազմում է 39,6 միլիարդ ռուբլի, այսինքն՝ մանրածախ առևտրում, 1928 թվականի համեմատութեամբ, ապրանքային մասսայի ավելացում մինչև 175%:

գ) պետական-կոոպերատիւ առևտրային ցանցի աճում 158 հազար կրպակով ու խանութով 1929 թվականի համեմատութեամբ:

դ) կոլտնտեսային առևտրի և առանձին պետական ու կոոպերատիւ կազմակերպութիւնների դոլդատնտեսական միջորումների հարաճուն ծավալում:

Սրանք են փաստերը:

Միտեղա՞մայն այլ որոտկեր է ներկայացնում ապրանքա-

աշտույտի դրությունը կապիտալիստական յերկիրներէ ներսում, վերտեղ ճղնաժամը հասցրեց առևտրի կատաստրոֆիկ կրճատման, ձեռնարկությունների մասսայական վաճաճման և ժանր ու միջակ առևտրականներէ քայքայման, խոշոր առևտրական ֆիրմաների սնանկացման և առևտրական ձեռնարկություններում ապրանքների կուտակման, յերբ շարունակում է ընկնել աշխատավոր մասսաների գնողունակությունը:

Սրանք են չորս տնրում կատարված հնգամյակի հանրազում փարներն ապրանքապտույտի զարգացման ընդառաջում:

ԶՈՐՍ ՏԱՐՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՀՆԳԱՄՅԱԿԻ ՀԱՆՐԱ-
ԳՈՒՄԱՐՆԵՐԸ ԹՇՆԱՄԻ ԴԱՍԱԿԱՐԳԵՐԻ
ՄՆԱՑՈՐԴՆԵՐԻ ԴԵՄ ՄՂՎՈՂ ՊԱՅՔԱՐԻ
ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ

Արդյունաբերության, գյուղատնտեսության ու առևտրի ընդառաջում հնգամյակն իրականացնելու հետևանքով՝ մենք ժողովրդական տնտեսության բոլոր վոլորտներում հաստատեցինք սոցիալիզմի սկզբունքը, դուրս քշելով այնտեղից կապիտալիստական տարրերին:

Ինչի՞ պետք է հասցնել այդ բանը կապիտալիստական տարրերի վերաբերմամբ և ինչի՞ հասցրեց այն իրականում:

Դա հասցրեց այն բանին, վոր հունից դուրս գցվեցին մեռնող դասակարգերի վերջին մնացորդները—արդյունաբերողներն ու նրանց սպասավորները, առևտրականներն ու նրանց արբանյակները, նախկին ազնվականներն ու տերտերները, կուլակներն ու յենթակուլակները, նախկին սպիտակ սպաներն ու ուրյազնիկները, նախկին վոստիկաններն ու ժանդարմները, չովինիստական յենթանգի ամեն տեսակ բուրժուական ինտելիգենտներն ու մյուս բոլոր հակախորհրդային տարրերը:

Այդ նախկին մարդիկ, դուրս գցված լինելով հունից և ցրվելով ամբողջ ԽՍՀՄ-ով մեկ, սողոսկեցին մեր դործարաններն ու ֆաբրիկաները, մեր հիմնարկներն ու առևտրական կազմակերպությունները, յերկաթուղային ու ջրային տրանսպորտի ձեռնարկությունները և գլխավորապես՝ կոլտնտեսություններն ու խորհրդային կոլեկտիվները: Նրանք սողոսկեցին ու թագնվեցին այնտեղ,

հապնելով «բանվորներին» ու «գյուղացիներին» դիմակ, ըստվորում նրանցից վրամանք խցկվեցին նույնիսկ կուսակցութեան մեջ:

Ի՞նչ բերին նրանք այնտեղ: Իհարկե, ատելութեան դժացմունք դեպի խորհրդային իշխանութիւնը, մոլեգին թշնամութեան զգացմունք դեպի տնտեսութեան, կենցաղի, կուլտուրայի նոր ձևերը:

Այդ պարոններն այլևս անգոր են ուղղակի դրոհի դիմելու խորհրդային իշխանութեան դեմ: Նրանք և նրանց դասակարգերն արդեն միեմանի անգամ այդպիսի դրոհ տվել են, բայց ջախջախվել ու ցանուցրիվ են արվել: Այդ պատճառով միակ բանը, վոր մնում է նրանց անել, դա բանվորներին, կոլտնտեսականներին, խորհրդային իշխանութեանը, կուսակցութեանը վատութիւն առնելն ու վնասելն է: Յեւ նրանք վնասում են, ինչպես վոր կարող են միայն, գործելով դանդաղ դադադողի: Հրկիզում են պահեստները և կոտորում են մեքենաները: Կազմակերպում են սաբոտաժ: Վնասարարութիւն են կազմակերպում կոլտնտեսութիւններում, խորհտնտեսութիւններում, ըստվորում նրանցից վրամանք, վորոնց թիւում կան նաև ինչ-վոր պրոֆեսորներ, իրենց վնասարարական յեռանդով այնտեղ են հասնում, վոր կոլտնտեսութիւններում ու խորհտնտեսութիւններում անասուններին ժանտախտ, սիրիւրախտ են պատվաստում, նպաստում են մենինգիտի տարածմանը ձիերի մեջ և այլն:

Բայց գլխավորն այդ չէ: Այդ նախկին մարդկանց «գործունեութեան» մեջ գլխավորն այն է, վոր նրանք կազմակերպում են պետական գույքի, կոոպերատիվ գույքի, կոլտնտեսային սեփականութեան մասսայական գողութիւն ու հափշտակում: Գողութիւն ու հափշտակում՝ ֆաբրիկաներում ու գործարաններում, գողութիւն ու հափշտակում՝ յերկաթուղային բեռների, գողութիւն ու հափշտակում՝ պահեստներում ու առևտրական ձեռնարկութիւններում, — առանձնապես գողութիւն ու հափշտակում՝ խորհտնտեսութիւններում ու կոլտնտեսութիւններում, — այս է այդ նախկին մարդկանց «գործունեութեան» հիմնական ձևը: Նրանք կարծես դասակարգային բնազդով զգում են, վոր խորհրդային տնտեսութեան հիմքը հանրային սեփականութիւնն է, վոր պետք է ցնցել հենց այդ հիմքը՝ խորհրդային իշխանութեանը վնաս տալու համար. և նրանք իսկապես աշխատում են ցնցել հանրային սեփականութիւնը՝ մասսայական գողութիւն ու հափշտակում կազմակերպելու միջոցով:

Հափշտակութիւններ կազմակերպելու համար նրանք ողոր-

դործում են կոլտնտեսականների, յերեկվա մենատնտեսների, իսկ այժմ կոլտնտեսութեան անդամների մասնավոր-սեփականատիրական ընտելութիւններն ու մնացուկները: Դուք, վորպես մարքսիստներ, պետք է գիտենաք, վոր մարդկանց գիտակցութիւնն իր զարգացումով հետ է մնում նրանց փաստական դրութիւնից: Կոլտնտեսականներն իրենց դրութեամբ այլևս մենատնտեսներ չեն, այլ կոլեկտիվիստներ են, բայց նրանց գիտակցութիւնն առայժմ դեռ հինն է, մասնավոր-սեփականատիրականը: Յեւ հաճախ գործող դասակարգերի շարքերից դուրս յեկած նախկին մարդիկ ոգտագործում են կոլտնտեսականների մասնավոր-սեփականատիրական սովորութիւնները, վորպեսզի հանրային գույքի հափշտակում կազմակերպեն և դրանով խախտեն խորհրդային կարգերի հիմքը — հանրային սեփականութիւնը:

Մեր ընկերներից շատերը բարեհոգի հայացքով են նայում նման յերեւոյթին, չհասկանալով մասսայական գողութեան ու հափշտակութեան փաստերի իմաստն ու նշանակութիւնը: Նրանք կույրի նման անցնում են այդ փաստերի կողքով, կարծելով, թե «այդտեղ առանձնապես վոչինչ չկա»: Բայց նրանք, այդ ընկերները, խորապես սխալվում են: Մեր հասարակարգի հիմքը կազմում է հանրային սեփականութիւնը ճիշտ այնպես, ինչպես կապիտալիզմի հիմքը կազմում է մասնավոր սեփականութիւնը: Յեթի կապիտալիստները մասնավոր սեփականութիւնը հոչակեցին սրբազան ու անձեռնմխելի՝ ձեռք բերելով իր ժամանակին կապիտալիստական հասարակարգի ամրապնդումը, ապա մենք, կոմունիստներս, առավել ևս սրբազան ու անձեռնմխելի պետք է հոչակենք հանրային սեփականութիւնը, վորպեսզի դրանով իսկ ամրացնենք տնտեսութեան նոր սոցիալիստական ձևերն արտագրութեան ու առևտրի բոլոր բնագավառներում: Թույլ տալ հանրային սեփականութեան գողացումն ու հափշտակումն — միևնույն է՝ բանը վերաբերում է արդյոք պետական սեփականութեանը, թե կոոպերատիվ ու կոլտնտեսային սեփականութեանը, — և անցնել նման հակահեղափոխական աշխատակցութիւնների կողքի և անցնել նման հակահեղափոխական աշխատակցութիւնների կողքով, — նշանակում է՝ նպաստել խաբխելու խորհրդային կարգերը, վորոնք հենվում են հանրային սեփականութեան վրա, վորպես իվորոնք հանրային սեփականութեան ուղիղ յերեւոյթ: Դրանից եր յեղնում մեր խորհրդային կառարութեանը, յերբ նա վերջերս որենք հրատարակեց հանրային սեփականութեան պահպանման մասին: Այդ որենքը ներկա մոմենտում հեղափոխական որինականութեան հիմքն է: Իսկ նրա ամենախիստ կենսագործման պարտավորութիւնն ամեն մի կոմու-

նիստի, ամեն մի բանխորի ու կոլտնտեսականի ամենատաղին պարտականութիւնն է:

Ասում են, թե մեր ժամանակվա հեղափոխական որինականութիւնը վոչնչով չի տարբերվում նեպի առաջին շրջանի հեղափոխական որինականութիւնից, թե մեր ժամանակվա հեղափոխական որինականութիւնը մի վերադարձ է դեպի նեպի առաջին շրջանի հեղափոխական որինականութիւնը: Այդ միանգամայն սխալ է: Նեպի առաջին շրջանի հեղափոխական որինականութիւնը նրա իր սուր ծայրով ուղղված էր դիւսպորապես ուղղական կոմունիզմի ծայրահեղութիւնների դեմ, «ապրիլին» բռնադրամներն ու հարկերն դեմ: Նա ապահովում էր մասնավոր տնտեսատիրոջը, մենատնտեսին, կապիտալիստին՝ նրանց դուշքի պահպանումն այն պայմանով, վոր նրանք ամենախիստ կերպով պահեն խորհրդային որենքները: Բոլորովին այլ կերպ է հեղափոխական որինականութիւնը բանը մեր որերում: Մեր ժամանակվա հեղափոխական որինականութիւնն իր սուր ծայրով ուղղված է վոչ թե ուղղական կոմունիզմի ծայրահեղութիւնների դեմ, վորոնք վաղուց են՝ այլևս գոյութիւն չունեն ընտելացն մեջ, այլ գոյերի ու մշտաբարների դեմ հանրային տնտեսութիւն մեջ, խորհրդաններն ու հանրային սեփականութիւնը հալածողների դեմ: Հետևաբար, մեր ժամանակներում հեղափոխական որինականութիւնը հիմնական հոգսը հանրային սեփականութիւնը պահպանելն է, և վոչ թե վորեն այլ բան:

Ահա թե ինչու հանրային սեփականութիւնը պահպանման համար պայքարելը, խորհրդային իշխանութիւնը որենքներով մեղադրամադրվող բոլոր միջոցներով ու բոլոր յեղանակներով պայքարելը—կուսակցութիւնը հիմնական խնդիրներից մեկն է:

Պրոլետարիատի ուժեղ ու հզոր դիկտատուրա, —ահա թե ինչ է պետք մեզ այժմ, վորպեսդի մենք բոլորովին հոգմացրել ենք նենք մեռնող դասակարգերի վերջին մնացորդները և ջախջախենք նրանց գողային մեքենայութիւնները:

Միջանի ընկերներ դասակարգերի վոչնչացման, անդասակարգ հասարակութիւնը կառուցման և պետութիւնը մահացման թեզիսը հասկացել են վորպես ծուլութիւն ու բարեհոգութիւն արդարացում, վորպես դասակարգային կռիւ մարելու և պետական իշխանութիւնը թուլանալու հակահեղափոխական թեորիայի արդարացում: Ավելորդ է նույնիսկ ասել, վոր այդպիսի մարդիկ վոչ մի ընդհանուր բան չեն կարող ունենալ մեր կուսակցութիւնը հետ: Նրանք կա'մ վերասերվածներ են, կա'մ յերկերեռաններ,

վորոնց պետք է դուրս վոնդել կուսակցութիւնից: Դասակարգերի վոչնչացումը գլուխ է բերվում վոչ թե դասակարգային կռիւ մարման միջոցով, այլ նրա ուժեղացման միջոցով: Պետութիւնը մահացումը կզա վո'չ թե պետական իշխանութիւնը թուլացման, այլ նրա առավելագույն ուժեղացման միջոցով, վոր անհրաժեշտ է՝ մեռնող դասակարգերի մնացորդներին վերջնականապես ջախջախելու և կապիտալիստական շրջապատման դեմ պաշտպանութիւնը կազմակերպելու համար, մի շրջապատում, վոր դեռ հեռու չէ վոչնչացված լինելուց և դեռ շուտով չի վոչնչացվի:

Վորպես հեղամայակի իրականացման արդյունք՝ մենք հասնք այն բանին, վոր վերջնականապես դուրս գցեցինք թշնամի դասակարգերի վերջին մնացորդներին նրանց արտադրական դիրքերից, ջախջախեցինք կուսակցութիւնը և հոգ նախապատրաստեցինք նրան վոչնչացնելու համար: Այս է հեղամայակի հանրադրամար բուրժուազիայի վերջին ջոկատների դեմ մղվող պայքարի բնագոյանում: Բայց այդ քիչ է: Խնդիրն այն է, վոր դուրս չպրտենք այդ նախկին մարդկանց մեր իսկ սեփական ձեռնարկութիւններն ու հիմնարկներից և վերջնականապես անվնաս դարձնենք նրանց:

Ձի կարելի ասել, թե այդ նախկին մարդիկ իրենց վնասարար ու գողային մեքենայութիւններով կարող են մի բան փոխել իՍՎՄ-ի այժմյան դրութիւնը մեջ: Նրանք չափազանց թույլ ու անզոր են, վորպեսդի կարողանան դիմակայել խորհրդային իշխանութիւնը ձեռնարկումներին: Բայց յեթե մեր ընկերները չըզինվեն հեղափոխական զգաստութիւնով և դուրս չվոնդեն իրենց պրակտիկայից քաղքենիական—բարեհոգի վերաբերմունքը դեպի հանրային սեփականութիւնը գողութիւնն ու հալածական փաստերը, ապա նախկին մարդիկ կարող են բավականաչափ չարիք պատճառել:

Պետք է նկատի ունենալ, վոր խորհրդային պետութիւնը գոյութիւնը աճումն ուժեղացնելու յե մեռնող դասակարգերի վերջին մնացորդները դիմադրութիւնը: Հենց այն պատճառով, վոր նրանք մեռնում են և իրենց վերջին որերն են ապրում, նրանք անցնելու յեն հարձակման մի ձևից հարձակման այլ, ավելի սուր ձևերի, դիմելով ընդհանրութիւնը հետամնաց խաբէրին և նրանց մորելիքայի յենթարկելով խորհրդային իշխանութիւնը դեմ: Ձկա այնպիսի ցածութիւնն ու զրպարտութիւն, վոր այդ նախկին մարդիկ չբարդերին խորհրդային իշխանութիւնը վրա և վորոնց շուրջը չիորձեյին մորելիքայի յենթարկել հետամնաց տար-

քերին: Այդ հողի վրա կարող են վերակենդանանալ ու շարժվել հակահեղափոխական հին կուսակցութիւններ, ես-երներ, մեն-շէիկներ, կենտրոնի ու ծայրերիներ բուրժուական նացիոնա-լիստների ջախջախած խմբերը, կարող են վերակենդանանալ ու շարժվել հակահեղափոխական ոպոզիցիոն աւարների բեկորները, տրոցկիստների և աջ ուկրոնիստների խմբից: Այդ, իհարկե, սար-սափելի չէ: Բայց այդ ամենը պետք է նկատի ունենալ, յետ-մենք ուզում ենք արագութեամբ ու առանց առանձին զոհերի վերջ տալ այդ տարրերին:

Ահա թե ինչու հեղափոխական զգաստութիւնը հենց այն հատկութիւնն է, վոր այժմ առանձնապէս անհրաժեշտ է բոլ-շէիկների համար:

Սրանք են հնգամյա պլանի կենսադործման հիմնական հան-դադումներն արդյունաբերութեան ու գյուղատնտեսութեան բնա-դալառում, աշխատավորների կենցաղի բարելավման և արդան-քապտույտի զարգացման բնագավառում, խորհրդային իշխանու-թեան ամրացման և մահացող դասակարգերի մնացորդների ու մնացուկների դեմ մղվող դասակարգային պայքարի ծավալման բնագավառում:

Սրանք են խորհրդային իշխանութեան հաջողութիւններն ու նվաճումները վերջին չորս տարում:

Սխալ կլիներ այդ հաջողութիւնների հիման վրա կարծել, թե մեղանում ամեն ինչ բարեհաջող է: Իհարկե, մեղանում ամեն ինչ էլ դեռ բարեհաջող չէ: Մեր աշխատանքի մեջ բաղականաչափ թերութիւններ ու սխալներ կան: Դեռ մինչև այժմ էլ մեր պրակ-տիկայում տեղ ունի անտնտեսավարութիւնն ու խառնաշփոթու-թիւնը: Դժբախտաբար յես չեմ կարող հիմա կանգ առնել թե-րութիւնների ու սխալների վրա, վորովհետև ինձ հանձնարար-ված հանրադումարային ղեկուցման շրջանակները դրա համար ինձ լայն տեղ չեն տալիս: Բայց բանը հիմա այդ չէ: Բանն այն-է, վոր, չնայած թերութիւններին ու սխալներին, վորոնց առ-կայութիւնը մեզանից վոչ վոք չի ժխտում, մենք ձեռք բերինք այնպիսի լուրջ հաջողութիւններ, վորոնք հիացմունք են առա-ջացնում ամբողջ աշխարհի բանվոր դասակարգի մեջ, մենք ձեռք բերինք այնպիսի հաղթութիւն, վորը ճշմարիտ վոր համաշխար-հային սրտմական նշանակութիւն ունի:

Ի՞նչը կարող էր խաղալ և ի՞նչն իրոք խաղաց դիւստր դերն-այն բանում, վոր, չնայած սխալներին ու թերութիւններին, կու-

սակցությունն այնուամենայնիվ վճռողական հաշտություններ ձեռք բերեց հնգամյակը չորս տարում իրականացնելու գործում:

Վո՞րտեղ են այն հիմնական ուժերը, վորոնք, հակառակ ամեն բանի, ապահովեցին մեզ համար այդ պատմական հաղթությունը:

Այդ, նախ, բանվորներին ու կոլտնտեսականների միլիոնավոր մասսաներին ակտիվությունն ու անձնվիրությունն էր, խանդավառությունն ու ձեռներեցությունը, մասսաներ, վորոնք ինժեներ-տեխնիկական ուժերի հետ միասին հսկայական եներգիա զարգացրին սոցիալիստական մրցակցության ու հարվածայնության ծավալման նկատմամբ: Տարակույս չի կարող լինել, վոր առանց այդ հանգամանքի մենք չէինք կարողանա նպատակի հասնել, չէինք կարողանա վոչ մի քայլ առաջ շարժվել:

Ֆերկորդ, դա կուսակցության ու կառավարության հաստատուն ղեկավարությունն էր, վորոնք կոչ էյին անում մասսաներին առաջ դնելու և վորոնք հաղթահարում էյին դեպի նպատակը տանող ճանապարհին ծառացած բոլոր ու ամեն տեսակ դժվարությունները:

Վերջապես, դա տնտեսության խորհրդային սիստեմի հատուկ արժանիքներն ու առավելություններն էյին, մի սիստեմ, վորի մեջ թաղնված են բոլոր ու ամեն տեսակ դժվարությունները հաղթահարելու համար անհրաժեշտ վիթխարի հնարավորություններ:

Սրանք են այն յերեք հիմնական ուժերը, վորոնք վորոչեցին յՍՂՄ-ի պատմական հաղթությունը:

Ընդհանուր յեզրակացություններ.

1. Հնգամյակի հանրագումարները տապալեցին բուրժուական ու սոցիալ-դեմոկրատական գործիչների այն պնդումը, թե հընդամյա պլանը մի Փանտաղիա յե, մի դառանցանք, անիրագործելի ցնորք: Հնգամյակի հանրագումարները ցույց տվին, վոր հընդամյա պլանն արդեն իրականացված է:

2. Հնգամյակի հանրագումարները ջախջախեցին բուրժուական հայտնի այն «հավատո հանգանակը», թե բանվոր դասակարգն անընդունակ է նոր բան կառուցելու, թե նա ընդունակ է միայն հինը կործանելու: Հնգամյակի հանրագումարները ցույց տվին, վոր բանվոր դասակարգն ընդունակ է նույնքան լավ կառուցելու նորը, վորքան և կործանելու հինը:

3. Հնգամյակի հանրագումարները ջախջախեցին սոցիալ-դեմոկրատների այն թեզիսը, թե մեկ, առանձին վերցրած յերկրում

անհնար է սոցիալիզմ կառուցել: Հնգամյակի հանրագումարները ցույց տվին, վոր միանգամայն հնարավոր է սոցիալիստական հասարակություն կառուցել մեկ յերկրում, վորովհետև այդպիսի հասարակության տնտեսական հիմքն արդեն կառուցված է յՍՂՄ-ում:

4. Հնգամյակի հանրագումարները տապալեցին բուրժուական տնտեսագետների այն պնդումը, թե տնտեսության կապիտալիստական սիստեմը լավագույն սիստեմն է, թե տնտեսության ամեն մի այլ սիստեմ՝ անկայուն է և անընդունակ՝ քննություն բռնելու տնտեսական զարգացման դժվարությունների հանդեպ: Հնգամյակի հանրագումարները ցույց տվին, վոր տնտեսության կապիտալիստական սիստեմը սնանկ է ու անկայուն, վոր նա արդեն անց է կացնում իր դարը և իր տեղը պետք է զիջի տնտեսության մի այլ, ավելի բարձր, խորհրդային, սոցիալիստական սիստեմի, վոր տնտեսության միակ սիստեմը, վորը չի վախենում ճգնաժամերից և ընդունակ է հաղթահարելու կապիտալիզմի համար անլուծելի դժվարությունները, — դա տնտեսության խորհրդային սիստեմն է:

5. Վերջապես, հնգամյակի հանրագումարները ցույց տվին, վոր կուսակցությունն անպարտելի յե, յեթե նա դիտե, թե ուր պետք է տանի գործը, և չի վախենում դժվարություններից:

(Փոքորկալից, յերկար չդադարող ծափահարություններ, վորոնք ովացիայի յեն վերածվում, դաիլինը վառփի կանգնած վողջուռում է ընկ. Ստալինին):



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

	Եջ
I. Հնգամյակի միջազգային նշանակությունը . . .	5
II. Հնգամյա պլանի հիմնական խնդիրը և նրա կենսագործման ուղին	18
III. Չորս տարում կատարված հնգամյակի հանրագումարներն արդյունաբերության բնագավառում . . .	22
IV. Չորս տարում կատարված հնգամյակի հանրագումարները գյուղատնտեսության բնագավառում	32
V. Չորս տարում կատարված հնգամյակի հանրագումարները բանվորների ու գյուղացիների նյութական դրության բարելավման բնագավառում	40
VI. Չորս տարում կատարված հնգամյակի հանրագումարները ֆաղափի և գյուղի միջև տեղի ունեցող ապրանքապտույտի բնագավառում	46
VII. Չորս տարում կատարված հնգամյակի հանրագումարները թշնամի դասակարգի մնացորդների դեմ մղվող պայքարի բնագավառում	51
VIII. Ընդհանուր յեզրակացություններ	57

ՎՐԻՊԱԿՆԵՐ

Եջ	Տաղ	Տաղած և	Պետք և լիճի
35	1 զ.	տապալման	«տապալման»
45	3 զ.	35 միլիոն	35 միլիարդ
53	19 զ.	սխալվում են	մոլորվում են

Թարգմ. Յերվ. Տ.-Միմասյուն
Խմբագիր՝ Վ. Գուրգենյան
Տեխն. խմբ. Ս. Խաչատրյան
Պատ. սրբագրիչ Լ. Արսվյան

Դրավիտի լիազոր ի—9714, հրատ. № 496
Պատվեր № 169, տիրած 6000,
Հանձնված և արտադրության 16/VIII 1937 թ.
Մտորադրված և տպագրելու 3/IX 1937 թ.
Գինը 60 հ.

Հայկ. տպարանի տպարան, Յերևան, Արավելդյան № 71

04

ՀՀ Ազգային գրադարան



NL0174823

Фил 60 4.

И. С Т А Л И Н
ИТОГИ
ПЕРВОЙ
ПЯТИЛЕТКИ

Армизартит, Ереван, 1967